

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Հայաստան.....1
- 2- Արցախ.....9
- 3- Արեւմտյան Հայաստան.....11
- 4- Միջազգային.....16
- 5- Խոհեր.....19
- 6- Գծանկարչություն.....20
- 7- Առածանի.....20

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր.....1-4



Շապիկի առաջին էջում` Հայոց բանակը

Վերջին էջում` Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 189, Հուլիս 2014 թ.

No. 189, July 2014

ماهنامه لویس - شماره ۱۸۹ مرداد ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր`

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ` louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն` www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը` Հատավաճառ - 5000 ռիալ
Քաժանորդագրություն`

Իրան` մեկ տարի` 60,000 ռիալ

Արտասահման` մեկ տարի` 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

INTERNATIONAL COMPATRIOTIC
ASSOCIATION OF TAVUSH REGION

0078, 41 Margaryan Str., Apt 41,
Yerevan, RA



ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

0078, Հայաստան, Երևան, Մարգարյան 41, բն. 41
Հեռ. (37410)35 14 91, քջջ.(37499)44 55 99

ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակի ղեկավար
պրն. Բ. Բուզետտիին
ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի ղեկավար,
դեսպան պրն. Ա.
Սորոկինին
Կարմիր խաչի
միջազգային կոմիտեի
Հայաստանի
պատվիրակության ղեկավար
տկն. Ս. Էպրեյտիին

Բաց նամակ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին

Միջազգային կազմակերպությունների հարգաբաժան
ներկայացուցիչներ

Տավուշի մարզի միջազգային հայրենակցական միավորումը լինելով Ադրբեջանի հետ ամենաերկար սահման ունեցող մարզի խնդիրներով զբաղվող ամենախոշոր կազմակերպությունը, պարտավորված է զբաղվելու սահմանային խնդիրներով:

Հաշվի առնելով Ձեր ներկայացրած միջազգային կազմակերպությունների լիազորություններն ու առաքելությունները ա/թ մարտ ամսին դիմել ենք Ձեզ, խնդրելով ճնշումներ գործադրել Ադրբեջանի իշխանությունների վրա` դատապարտելով կատարվող անմարդկային վերաբերմունքը գերիների նկատմամբ:

Մինչ այսօր Ձեր կողմից չենք ստացել որևէ արձագանք, որի համար ցավում ենք:

Եվս մեկ անգամ դիմում ենք Ձեզ, խնդրելով և պահանջելով վերոնշյալ խնդրից բացի հրատապ միջոցառումներ ձեռնարկել կասեցնելով Ադրբեջանի կողմից զինադադարի ռեժիմի խախտման դեպքերը: Արբեջանի ղեկավարությունը օգտվելով Ձեր անգոծությունից սկսել են գնդակոծել սահմանային գյուղերը, նույնիսկ հունիսի 26-ին կրակ են բացել Մովսես գյուղի շրջանավարտների ուղղությամբ:

Այս անգամ ևս Ձեր կողմից միջոցառումներ չձեռնարկելու դեպքում մենք պատրաստակամ ենք սկսել հասարակական մեծ շարժում Ձեր չկատարած աշխատանքների դեմ:

Նախապես տեղեկացնում ենք նաև, որ խաղաղ ճանապարհով հաջողություն չգրանցելու դեպքում պարտադրված ենք և ունենք հնարավորություն խնդիրը լուծել ուժային եղանակով` Ադրբեջանին համապատասխան ոճով:

Համախմբելով ողջ աշխարհի տավուշցիների հնարավորությունները, կիսմաադրենք ՏԱՎՈՒՇԻ ՄԱՀՄԱՆԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴ: Բրիգադի անդամները վճռական կլինեն Տավուշին միացնել նախկին հայկական Ղազախի շրջանը, վերջնականորեն լուծելով Ադրբեջանի հետ ունեցած խնդիրները Տավուշի մասով:

Հարգանքներով`

Մերգեյ Բարսեղյան

Տավուշի մարզի միջազգային հայրենակցական միավորման նախագահ

Շայաստան

Լեռնային Ղարաբաղը պատրաստ է պատերազմական գործողությունների. ԼՂՀ ՊՆ

04/08/2014 19:28:00



Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարի խոսքով՝ ինչպես 90-ականների պատերազմի տարիներին, այնպես էլ հիմա Ադրբեջանի բանակը անպատրաստ է և չմտածված է գործում:

Վերջին 24 ժամվա ընթացքում հայկական դիրքերի ուղղությամբ մոտ 12 հազար կրակոց է արձակվել: Պաշտպանության նախարարության փոխանցմամբ՝ ադրբեջանական կողմը կիրառել է նաև խոշոր տրամաչափի զինատեսակ: Հայկական կողմից, որպես պատասխան, մոտ 4000 կրակոց է արձակվել, ինչի արդյունքում հակառակորդը լռել է:

Պաշտպանության նախարարության մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը «Ազատության» հետ զրույցում ասել է, որ կրակոցները հատկապես շատ են եղել գիշերը: Ադրբեջանի զինված ուժերի թիրախում է եղել նաև խաղաղ բնակչությունը:

«Բոլոր գյուղերի ուղղությամբ էլ ինչ-որ բաներ եղել են՝ որոնք որ կրակագծի տակ են՝ մոտավորապես 20 գյուղեր, ուղղակի որոշ տեղերում՝ շատ, որոշ տեղերում՝ քիչ: Բայց, հիմնական ծանրության կենտրոնը ոչ թե գյուղերի ուղղությամբ է, այլ դիրքապահների: Ջոհեր և վիրավորներ չունենք», - փոխանցեց Արծրուն Հովհաննիսյանը:

Ըստ ՊՆ մամուլի խոսնակի՝ հակառակորդը հիմնականում կրակել է Ղարաբաղի ուղղությամբ. հրադադարի ռեժիմը խախտվել է մոտ 900 անգամ, որի 90 տոկոսը Արցախի հատվածում:

Լեռնային Ղարաբաղում պատերազմական գործողությունների պատրաստ են: Այս մասին հայտարարել է Ղարաբաղի Պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար Մովսես Հակոբյանը Արցախի Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում

ընդգծելով, որ վերջին մի քանի օրերի ընթացքում «հակառակորդի անգրագետ և չհաշվարկվող գործողությունները ցույց են տալիս, որ նա ամեն ինչի ունակ է, մինչդեռ՝ եթե լայնամասշտաբ գործողություններ սկսեն, Ղարաբաղի զինուժը մտահոգվելու տեղ չունի»:

«Կարծում եմ, վերջին գործողություններից Ադրբեջանի ժողովուրդը պիտի հասկանա՝ ցանկացած արկածախնդրություն, իրենց ղեկավարի, ինչի ա բերում: Ընդամենը քանակներն ա ավելանալու կորուստների, բայց մեր սահմանների փոփոխություն տեղի չի ունենալու: Եթե փոփոխություն էլ տեղի ունենա, տեղի է ունենալու Ադրբեջանի տարածքային ամբողջականության հաշվին», - ասել է Ղարաբաղի պաշտպանության նախարարը:

Գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանի կարծիքով՝ Ադրբեջանը պարզապես սադրում է և փորձում ապակայունացնել իրավիճակը, իսկ դրա համար մի քանի պատճառներ կան. առաջինը՝ բանակցային գործընթացում Ադրբեջանի անհաջողությունն է:

Լուրջ պատճառ է նաև նորանշանակ պաշտպանության նախարար Ջաքիր Հասանովը, ով այսպիսի գործողություններով ցանկանում է ինքնահաստատվել և ապացուցել, որ նախորդից ավելի լավն է:

Փոփոխությունը զգացվում է նաև դիվերսիաների թվի ավելացմամբ, մինչդեռ, Հակոբյանի խոսքով, ամեն անգամ պատմությունը նույնն է՝ իրենք, հակառակորդին մեծ վնասներ պատճառելով, հետ են շարտում:

«Պաշտպանության բանակի հատուկ ստորաբաժանումները որոշակի նաև պատժողական գործողություններ են իրականացրել՝ փորձելով հակառակորդին բացատրել, որ այս ճանապարհը բերում է նորից 1992-1994 թվականներին և նորից պակվելու է 1994 թվականը: Կարծում եմ, հակառակորդն արդեն պիտի որոշակի գնահատական տա և հասկանա, որ սա դառնալու է 1994 թվականի մայիսի 12-ը», - նշել է Մովսես Հակոբյանը:

«Ինչպես 90-ականների պատերազմի տարիներին, այնպես էլ հիմա Ադրբեջանի բանակը անպատրաստ է և չմտածված է գործում», - ասել է Պաշտպանության բանակի հրամանատարը:

Նա հիշեցրել է, որ առաջին գիծը կառուցված է պաշտպանության համար, այն անխախտելի է և որևէ մեկը չի կարող փոփոխել՝ «սա պետք է ընկալեն նաև Ադրբեջանում»:

Իսկ նորանշանակ պաշտպանության նախարար Ջաքիր Հասանովին Մովսես Հակոբյանը խելք է մաղթել:

«Մենք անելու ենք այն, ինչ որ գտնում ենք ճիշտ է: Մենք անելու ենք այն, որպեսզի հակառակորդը զերծ մնա նմանատիպ գործողություններից: Պա տարբեր բնույթի է լինելու՝ ինչպես հակառակորդին դիմավորելով մեր դիրքերում, ինչպիսին իրականացրել է մեր պաշտպանական շրջանի զինծառայողները տարբեր հատվածներում, այնպես էլ նաև կանխարգելիչ միջոցառումներ», - հայտարարել է Հակոբյանը:

Պաշտպանության բանակի հրամանատարի համոզմամբ՝ հայկական Ջինված ուժերը վերջին մի քանի օրերին պարզապես փայլուն կերպով են իրականացրել իրենց խնդիրը, սա ոգևորել է զինծառայողներին: Գեներալի խոսքով՝ մեր բանակում երբեք մարտական ոգին այսքան բարձր չի եղել. բոլորը պատրաստ են պայքարել:

Իրականությունը՝ փաստերով – ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայություն



www.nkrmil.am

03.08.2014

Ադրբեջանի պետական ու ոչ պետական քարոզչության որդեգրած մարտավարությանն ուշադիր հետևելու դեպքում առաջին հերթին այն տպավորությունն են ստանում, որ հարևան, բայց ոչ բարեկամ երկրի նշված ոլորտի պատասխանատուները ոչ թե հակված են գոնե ինչ-որ չափով ներկայացնել առկա ազդեցիկ քաղաքական գարգացումների իրական վիճակը, որքան՝ իրենց քիմքին հարիր, ցանկալին մատուցել իրականի փոխարեն: Դա հատկապես երևում է վերջին օրերին ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում տեղ գտած անախտադեպ լարվածության ֆոնի վրա, երբ մի կողմից նախահարձակ հակառակորդը փորձում է իրեն ներկայացնել հայկական ագրեսիայի գոհ, իսկ մյուս կողմից ցույց տալ, թե ինչպիսի հակահարված ու կորուստներ է հասցնում Արցախի բանակին: Մինչդեռ իրողությունը լրիվությամբ հակառակն է և այն ունի հետևյալ պատկերը: Ս.թ. հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 3-ը ադրբեջանական բանակը հակամարտ գործերի շփման գծի տարբեր հատվածներում իրականացրել է հետախուզադիվերսիոն գործողության 5-ից ավելի փորձ, որոնցից յուրաքանչյուրում ստանալով արժանի հակահարված՝ բազմաթիվ կորուստներով հետ է շարտվել իր ելման դիրքերը: Ինչպես պաշտպանական, այնպես էլ կանխարգելիչ գործողությունների արդյունքում Պաշտպանության բանակի առաջապահ ստորաբաժանումները՝ ըստ օրերի և ուղղությունների հակառակորդին հասցրել են հետևյալ կորուստները՝

- հուլիսի 28-ին Մարտակերտի ուղղությամբ Ադրբեջանի հատուկ նշանակության ջոկատայինները տվել են 2 զոհ և վիրավորներ ու հետ շարտվել:
- նույն օրը՝ Մարտունու ուղղությամբ հակառակորդի կողմից ձեռնարկված դիվերսիոն գործողության անհաջող փորձն ավարտվել է 1 զոհով ու վիրավորներով:
- հուլիսի 31-ին՝ Գյուլիստանի ուղղությամբ գործող հայկական ուժերը շարքից հանել են 2 ասկյարի:

- Պաշտպանության բանակի կողմից օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը Ասկերանի ուղղությամբ ձեռնարկված կանխարգելիչ գործողության արդյունքում հակառակորդը տվել է 9 զոհ և 7 վիրավոր: Իրենց ուղքով փախուստի են դիմել 10 ասկյարից միայն 3-ը:
- նույն ժամանակահատվածում /օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը/ Մարտակերտի ուղղությամբ հետախուզադիվերսիոն գործողություն ձեռնարկված հակառակորդի շուրջ 50 հոգանոց հատուկ նշանակության ստորաբաժանումը հետ է շարտվել իր ելման դիրքերը՝ տալով 6 զոհ և 7 վիրավոր:
- տակավին նույն օրը՝ Մարտունու ուղղությամբ ձեռնարկված կանխարգելիչ գործողության արդյունքում ՊԲ անձնակազմը շարքից հանել է 3 ասկյար, 4-ին՝ վիրավորել:
- օգոստոսի 2-ին Ասկերանի ուղղությամբ ձեռնարկված դիվերսիոն գործողության արդյունքում Ադրբեջանը տվել է 1 զոհ և վիրավորներ ու հետ շարտվել:

Ընդհանուր առմամբ ադրբեջանական բանակը հուլիսի 28-ից օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում հակամարտ գործերի շփման գծի տարբեր հատվածներում տվել է առնվազն 25 զոհ և 30-ից ավելի վիրավորներ:

Նույն ժամանակահատվածում Արցախի պաշտպանության բանակի կորուստների թիվը կազմել է 5 զոհ, 7 վիրավոր:

Սա է ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում վերջին հինգ օրերին տեղի ունեցած լոկալ առձակատումների իրական պատկերը, որին դեռևս կանդրադառնանք:

ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայություն

Բերձորում մարտական տրամադրություն է կամավորների առաջին հարյուրյակն արդեն մեկնել է սահման



03 Օգոստոսի 2014 - 19:29

Այսօր առավոտից Քաշաթաղի վարչակազմի շենքը սովորականից մարդաշատ էր, իսկ հավաքվածների մոտ տրամադրությունը մարտական: Եկել են զինվորագրվելու հայրենիքի պաշտպանության գործին: Ինչպես տեղեկացնում է karabakh-life.am-ը, շրջվարչակազմի աշխատակազմից, ամբողջ գիշեր սպասել են առավոտվան, որ հավաքվեն ու մեկնեն սահման: Առաջին հարյուրյակն արդեն մեկնել է՝ գլխավորությամբ Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանի: Մեկնելուց առաջ կամավորները ստացել են զինվորական հագուստ, սնունդ:

„Պատրաստ ենք ոչ միայն մարտական հերթապահության, այլ նաև ակտիվ ռազմական

գործողությունների: Մենք վախենալու ոչինչ չունենք: Թշնամին թող վախենա, որովհետև գիտի, թե գործը ում հետ է,- վճարկանությանը լեցուն ծայրով ասում են կամավորները:

Երևի թե, ավելորդ չի նշել, որ Բերծորում կամավորները նույնիսկ խղճում են թշնամուն, որ ստիպված է լինելու նորից հաշտվել տարածքային նոր կորուստների հետ: Այս թեմայով նույնիսկ կատակում են: Նրանից մեկը նույնիսկ սաստեց ընկերներին. „Հիմիկվանից ասում եմ, Կիրովաբադի օդանավակայանը իմնա, մեկը ինձնից առաջ չընկնի,,: Նշենք, որ վարչակազմի ղեկավար Ս. Խաչատրյանի կոչին սահմանապահներին օգնության հասնելու վերաբերյալ, արձագանքն էլ են բոլորը: Այսօր վարչակազմի աշխատակիցները ստիպված են եղել հավաքագրել միայն հարյուր կամավորի, մնացածը պատրաստակամ սպասում են իրենց հերթին: HayNews.am

Հիվանդանոցում մահացել է դիվերսիայի հետևանքով վիրավորված հայ զինծառայողը

03 Օգոստոսի 2014 - 16:18

Հիվանդանոցում մահացել է նախօրեին ադրբեջանական դիվերսիայի հետևանքով վիրավորված զինծառայող 1994 ծնված Սարգիս Արմենի Մովսիսյանը, այս մասին HayNews.am-ի հետ զրույցում ասաց ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը:

Հիշեցնենք,, որ օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի հյուսիսարեւելյան եւ արեւելյան հատվածներում հակառակորդի կողմից ձեռնարկվել էր հետախուզադիվերսիոն գործողություն: Մարտակերտի ուղղությամբ հակառակորդը տվել է 6 զոհ /նախկին 5-ի փոխարեն/ եւ 7 վիրավոր, իսկ Մարտունու ուղղությամբ՝ 3 զոհ /նախկին 2-ի փոխարեն/ եւ 4 վիրավոր:

Վերոնշյալ գործողությունների ընթացքում դարաբաղյան կողմը տվել է 1 զոհ, իսկ 3 զինծառայողներ ստացել էին մարմնական վնասվածքներ: Հայրենիքի պաշտպանության ժամանակ արիաբար զոհվել էր ՊԲ զինծառայող, ավագ լեյտենանտ, 1989թ. ծնված Ջորիկ ժիրայրի Գեւորգյանը: HayNews.am

Արիության մեդալ՝ Նորայր Քամալյանին



03 Օգոստոսի 2014

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և նվիրումի, կյանքին

սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը պատշաճ կատարելու համար գորանասի շարքային Նորայր Միքայելի Քամալյանին պարգևատրել է Արիության մեդալով:

ՀՀ ՊՆ-ն զգուշացնում է Ադրբեջանին 02 Օգոստոսի 2014



ՀՀ պաշտպանության նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում անդրադարձել է վերջին օրերին հայ-ադրբեջանական ուժերի շփման գծում տիրող իրավիճակին:

Ինչպես տեղեկացնում է Razm.info-ն, հաղորդագրությունում նշվում է՝ ադրբեջանական զինված ուժերը չեն դադարեցնում հայկական ուժերի դիրքերը ներթափանցելու և դիվերսիոն գործողություններ իրականացնելու փորձերը:

Արցախի պաշտպանության բանակի դիրքերի ուղղությամբ կիրառվում են խոշոր տրամաչափի հրաձգային և հրետանային զինատեսակներ և զինամթերք՝ նռնականետեր, ականանետեր, զենիթային հրանոթներ և ջերմաձնշումային արկեր: Հաճախակիացել է նաև սահմանամերձ բնակավայրերի գնդակոծումը: Օրըստօրե ավելանում են երկու կողմերի կորուստները:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը հայտարարում է, որ Ադրբեջանի ՋՈւ նման գործելակերպը ամբողջովին հակասում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման բանակցությունների ոգուն ու տրամաբանությանը և հղի է ծավալուն ռազմական գործողությունների վերաճելու իրական վտանգով:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կոչ է անում ադրբեջանական կողմին զերծ մնալ իրավիճակի հետագա սրմանն ուղղված քայլերից և ջանքեր գործադրել հայ-ադրբեջանական ուժերի շփման գծում իրավիճակը կայունացնելու ուղղությամբ:

Առկա լարվածությունը սաստկացնելուն ուղղված ադրբեջանական կողմի գործողությունների շարունակման դեպքում հայկական զինուժը ստիպված կլինի էլ ավելի խստացնելու Ադրբեջանի պաշտպանության նախարարության ղեկավարության՝ ռազմական տրամաբանությունից զուրկ և անմիտ վրեժխնդրության դրսևորումների նկատմամբ պատժամիջոցները:

**Հակառակորդը խոշոր տրամաչափի
հրազենից գնդակոծել է
Բարեկամավանը. ՊՆ**

02.08.2014

Հայ-ադրբեջանական սահմանագոտու հյուսիսարևելյան հատվածում՝ ադրբեջանական Քեմեռլի բնակավայրի ուղղությամբ տեղակայված դիրքերից, օգոստոսի 2-ին, հակառակորդը խոշոր տրամաչափի հրազենից գնդակոծել է Բարեկամավան գյուղը:

ՀՀ ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ հակառակորդի կրակակետերը լռեցնելու նպատակով պատասխան կրակ է բացվել ադրբեջանական դիրքերի եւ Քեմեռլի բնակավայրում տեղակայված ադրբեջանական ՋՈւ ստորաբաժանմանումների ուղղությամբ: Ըստ նախնական տվյալների՝ ադրբեջանական կողմը կրել է զգալի կորուստներ: Հայկական կողմից զոհեր եւ վիրավորներ չկան: ՀՀ զինված ուժերը շարունակում են վերահսկել իրավիճակը շփման գծում:

**ՀՀ պատգամավոր. Սարսանգի
ջրամբարի ճակատագրի քննարկումը
հայկական կողմի շահերից է բխում**

Հուլիսի 03, 2014

Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) սոցիալական հարցերի հանձնաժողովում ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ Սարսանգի ջրամբարի ճակատագրի քննարկումը հայկական կողմի շահերից է բխում: Այս մասին հուլիսի 3-ին խորհրդարանում կայացած ձեպագրույցում հայտարարեց իշխող ՀՀԿ խմբակցության պատգամավոր, ԵՆԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ Նաիրա Կարապետյանը:



Նրա խոսքով, ադրբեջանական կողմը երկար ժամանակ Սարսանգի ջրամբարի հարցը հնարավոր բոլոր միջոցներով փորձել է քննարկման դնել միջազգային բոլոր կառույցներում, սակայն միշտ բացասական պատասխան է ստացել: Այս անգամ հարցն ուղարկվել է ԵՆԽՎ սոցիալական հարցերի հանձնաժողով:

Կարապետյանը նշեց, որ Սարսանգի ջրամբարի հարցը ներկայացվում է որպես մարդասիրական, քանի որ դրա հարակից տարածքներում բնակվող ադրբեջանցիները զրկված են դաշտերը ոռոգելու հնարավորությունից, ինչի հետեւանքով մարդասիրական աղետ է հասունանում:

«Հայկական կողմի համար այդ հարցի քննարկումը շատ կարեւոր է. պաշտոնական Ստեփանակերտը բազմիցս առաջարկել է Սարսանգի ջրամբարը շահագործել ադրբեջանական կողմի հետ համատեղ: Եթե ադրբեջանական կողմը համաձայնի դրան, ապա ստիպված կլինի բանակցություններ վարել հայկական կողմի հետ», - ասաց պատգամավորը:



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք, Հեռ. (+374)10554057
(+374) 91425504, էլ. փոստ՝ t.g.hasarakakan.kartsiq@gmail.com

Հարգելի հայրենակից
Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն»-ը պետական այն եզակի հարթակն է, որը հասարակության մասնակցությունն է ապահովում պետական կառավարման և ինքնակառավարման համակարգերում՝ իրականացնելով հետազոտություններ, սոցիոլոգիական ուսումնասիրություններ, հանրային քննարկումներ ու բանավեճեր:

Հաշվի առնելով հայության առջև ծառայած այսօրվա մարտահրավերները՝ հարկ է միասնական ջանքերով գնահատել և համախմբել մեր ազգային հանրույթի ներուժը, հանդես գալ առավել միասնական և կազմակերպված, ձևավորել առավել գործուն հարթակներ աշխարհում սփռված հայության մարդկային ու մասնագիտական կապիտալի արդյունավետ գործադրման համար:

Վստահ ենք, որ Սփյուռքի համայնքները մի առանձին նախանձախնդրությամբ կարձագանքեն Հայաստան-Սփյուռք գործակցության արդիականացման մեր ծրագրին, ինչը կարող է մեր համազգային իդեալներն ու երազանքները զգացական հարթություններից տեղափոխել աշխատանքային հրապարակներ՝ ի նպաստ մեր երկրի և այն ուժեղ ու բարեկեցիկ տեսնելու երազանքով ապրող ողջ հայության:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՄՓՅՈՒՌՔ. ԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ծրագրի շրջանակում նախատեսված է իրականացնել սոցիոլոգիական հարցումներ, հարցազրույցներ, քննարկումներ, ինչպես նաև միջոցների առկայության դեպքում այցեր Հայ համայնքներ, որն հնարավորություն կնձեռի տեղերում անցկացնել անմիջական հանդիպում-քննարկումներ, խորքային ուսումնասիրություններ:

Խնդրում ենք Ձեզ, օգնել և փոխանցել Ձեր համայնքում բնակվող հայ մարդկանց կոնտակտային տվյալներ (**mail, skype, հեռախոսահամար**), որոնց հետ կապ հաստատելուց և իրենց համաձայնությունը ստանալուց հետո միայն կներգրավվենք ծրագրով նախատեսված հարցումներում և քննարկումներում:

Միևեկ հայրենակից՝ Ձեր աջակցությունը կնպաստի իրականացնել ՀԱՅԱՍՏԱՆ - ՄՓՅՈՒՌՔ. ԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ծրագիրը, այն հաստատ համոզմամբ, որ հայության միասնական ջանքով է միայն հնարավոր կերտել բոլորիս երազանքի տունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Հարգանքով՝ «Հասարակական կարծիքի Ուսումնասիրման կենտրոնի» տնօրեն
Թամարա Գևորգյան



Այս տարի Երեւանում արդեն 10.284 երեխա է ծնվել



Առողջապահության, առևտրի եւ սպասարկումների, տեխնոլոգիաների, արտաքին ձեւավորման եւ գովազդի ոլորտներում Երեւանի քաղաքապետարանի ծրագրերի բարելավման ու կատարված աշխատանքների թվային ցուցանիշների դրական միտումներ են նկատվում: Երեւանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանը ներկայացրել է նշված ոլորտների կիսամյակային ամփոփ արդյունքները :

2014 թվականին 49 տոկոսով ավելացվել է Երեւանի համայնքային բյուջեով առողջապահական ծախսերին հատկացված գումարը: Այս տարի 165 մլն դրամ է ուղղվել Երեւանի քաղաքապետարանի ենթակայության բուժօժանոցներում համար բուսարքավորումներ գնելուն եւ 3 համաբուժարաններում էլ՝ մասնակի նորոգում կատարելուն: Բուժարքավորումների համար նախատեսված 100 մլն դրամից մրցույթից հետո տնտեսվել է շուրջ 24 մլն-ը, 4 մլն դրամ էլ տնտեսվել է վերանորոգման 50 մլն արժողությամբ ծրագրի կատարումից: Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի նախաձեռնությամբ քաղաքապետարանը սոցիալապես անապահով բնակչության համար առաջին անգամ տոմոգրաֆիայի 15 մլն դրամ արժողությամբ թանկարժեք համարվող բուժառայություն է գնել, որից արդեն օգտվել է 59 քաղաքացի:

«Առողջապահական համակարգում դեռեւս խորհրդային ժամանակաշրջանից ժառանգած խնդիրներ ունենք, հետեւաբար եւ՝ շատ անելիքներ, որպեսզի կարողանանք մեր բնակչությանը որակյալ եւ մատչելի առողջապահական ծառայություններ մատուցել: Ցավոք, ունենք հիմնարկներ, որոնք շահագործման օրից ի վեր չեն նորոգվել, չեն համալրվել սարքավորումներով: Ծրագրով ձեռք է բերվել 14 անուն բուժարքավորում. սա, իհարկե, բավարար չէ, հետեւաբար, ծրագիրը շարունակական է», - նշել է Երեւանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանը:

2014թ. առաջին կիսամյակում Երեւանի քաղաքապետարանի ենթակայության հիվանդանոցային ծառայություններ մատուցող 8 բուժօժանոցներում էլ դիմել 10.974 քաղաքացի 4 տոկոսով պակաս հաշվետու նախորդ ժամանակաշրջանի համեմատ: Շտապօգնության սպասարկման կանչերի թվում հիվանդանոց տեղափոխվողների թիվը մեկ տոկոսով ավելացել է՝ 113.272 կանչի դեպքում 21.333 հիվանդ:

Մայրաքաղաքում տարեկան կիսամյակային համեմատությամբ 3 տոկոսով ավելի է ծննդօգնության ցուցանիշը. Այս տարի Երեւանում արդեն 10.284 երեխա է ծնվել:

Անվճար դեղորայք ստացել քաղաքացիների թիվն էլ է ավելացել. 99.000՝ նախորդ առաջին կիսամյակի 96.450-ի դիմաց:

Երեւանի քաղաքապետարանի ենթակայության 23 համաբուժարաններ է դիմել 1 մլն 58 հազար 396 քաղաքացի:

Երեւանի քաղաքապետարանի ենթակայության բուժօժանոցներում դիմելության նվազման համապատկերին ավելացել է քաղաքապետարանի կազմակերպած անվճար բուժապասարկման ակցիաներից օգտվող քաղաքացիների թիվը, հետեւաբար, ակցիան առողջապահականից բացի, նաեւ սոցիալական նշանակություն ունի: Գարնանային «Ձեզ համար, կանայք» առողջապահական ակցիայով բուժօժանոցներ է դիմել 26.144 կին, ինչը նախորդ տարիների ցուցանիշները գերազանցել է 2-4 անգամ: «Ձեզ համար, կանայք»-ն այս տարի ընդգրկել է գրեթե բոլոր ոլորտները: Դավիթ Օհանյանը նշել է, որ քաղաքապետարանը պատրաստվում է հաջորդ ակցիային, որից, ի տարբերություն գարնանայինի, որից միայն կանայք էին օգտվում, կօգտվեն բոլորը:

«Օգոստոսի 1-ից մեկնարկում է «Երեւանյան ամառ» ծրագրի առողջապահական ենթածրագիրը, որը ներառում է վահանաձեւ գեղձի, սիրտ-անոթային հետազոտություններ եւ համակարգչային տոմոգրաֆիայի հետազոտություններ: Ամառային ակցիան նախեստաց ունենալու է կանխարգելիչ նշանակություն՝ այս հիվանդությունների վաղ հայտնաբերելուն է ուղղված, անհրաժեշտության դեպքում նախատեսված է եւ բուժում», - ներկայացրել է Երեւանի քաղաքապետի տեղակալը:

Սերժ Սարգսյանը Թուրքիայի իշխանություններին. Նման «արդարություն» մենք ընդունել չենք կարող



Հուլիսի 08, 2014

«Հաջորդ տարի ապրիլի 24-ին լրանում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Ապրիլի 24-ը, անշուշտ, խորհրդանշական օր է. բոլորիս էլ պարզ է, որ ցեղասպանությունը չի սկսվել եւ չի ավարտվել մեկ օրում: Ավելին այն չի կարելի ավարտված համարել այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքիայի

իշխանությունները շարունակում են ժխտել կատարվածը»: Այդ մասին հայտարարել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը արգենտինահայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

«Սակայն վստահ եմ, որ հեռու չէ այն օրը, երբ թուրքիան առերեսվելու է սեփական պատմությանը: Դրանով իսկ թուրքիայի ղեկավարները կազատեն իրենց ժողովրդին այն ծանր բեռից, որ ստիպված կրում են արդեն մեկ հարյուրամյակ: Կարծում եմ դրան մեծապես նպաստելու է հենց թուրքիայում նոր թափ առնող հասարակական գիտակցությունը՝ ի դեմս երիտասարդ եւ ուսյալ սերնդի, որն այսօր արդեն ներողությունը գերադասում է ամոթալի ուրացումից:

Այո, հազարավոր թուրքեր մերժում են ուրացման պաշտոնական քաղաքականությունը եւ իրենց համերաշխությունն են հայտնում հայ ժողովրդին: Այդ գարգացումներն ակնհայտ են, եւ դրանք ստիպում են թուրքիայի իշխանություններին որոշակի քայլեր ձեռնարկել», - նշել է Սարգսյանը:

Վերջինիս խոսքով, թուրքիայի ղեկավարությունն այժմ անգամ խոսում է հայերի եւ թուրքերի շրջանում «արդար հիշողություն» ստեղծելու անհրաժեշտության մասին: «Սակայն իր հաջորդ քայլով իսկ փորձում է ականապատել արդարությունը հավասարության նշան դնելով մեկուկես միլիոն քաղաքացիական անմեղ զոհերի, որոնք հիմնականում ծերեր, կանայք ու երեխաներ էին, եւ Օսմանյան կայսրության հանցագործ ղեկավարների արկածախնդրության պատճառով Առաջին աշխարհամարտում զոհված թուրք զինվորների միջեւ:

Դա «արդար» հիշողություն չէ: Նման «արդարություն» մենք ընդունել չենք կարող: Իրականում դա Հայոց ցեղասպանության ուրացման քաղաքականության նորացված, ավելի կատարելագործված ու վերափաթեթավորված տարբերակն է», - ասել է Սարգսյանը:

Նա նշել է, թե Հայաստանը շարունակելու ենք համախմբված գործունեությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ: «Սակայն մեր նախնիների հիշատակը պետք է հարգենք ոչ միայն մեր պայքարն իր նպատակին հասցնելով, այլեւ մեր Հայրենիքը զորացնելով, յուրաքանչյուր հայի տաղանդն ու հնարավորություններն ի փառս Հայրենիքի օգտագործելով:

Պետք է յուրաքանչյուրս հպարտ լինի, որ Հայոց ցեղասպանության հարյուրամյակի նախաշեմին մենք կանգնած ենք ուղղված մեջքով, բաց ձակատով եւ անկախ հայկական զույգ պետությունների Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյությամբ: Անգամ մեզ պարտադրված դժվարին շրջափակման եւ «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» իրավիճակի պայմաններում Հայոց հայրենիքը շարունակում է գարգանալ», - ասել է նախագահը:

Մահացել է Սեն Սուրենի Արևշատյան

Սեն Սուրենի Արևշատյան (հունվարի 7, 1928 - հուլիսի 25, 2014), հայ փիլիսոփա, պատմաբան, 1982 - 2007թթ. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն:



Կենսագրություն

Ծնվել է 1928թ. հունվարի 7-ին Երևանում: Հայրը՝ Սուրեն Արևշատյանը, թատերական ինստիտուտի դասախոս էր, մեծ հարգանք վայելող մտավորական, հռետորության բուհական առաջին ձեռնարկի հեղինակ: 1951թ. Սեն Արևշատյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1951-54թթ. ՀՍՍՀ ԳԱ ասպիրանտուրայում մասնագիտացել է հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ: 1956թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն 14-15-րդ դարերի մատենագիր, ականավոր գիտնական Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների վերաբերյալ: 1954-59թթ. Ս. Արևշատյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտաշխատող: 1959թ. ասպիրիլին նա աշխատանքի է անցել ՀԽՍՀ Մինստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտում Մատենադարանում՝ որպես սկզբնաղբյուրների գիտական թարգմանության բաժնի վարիչ: 1972թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: 1973 թվականին Ս. Արևշատյանը ղեկավարել է Մատենադարանի հին բնագրերի ուսումնասիրության և հրատարակման բաժինը, իսկ 1982 թ. մարտին նշանակվել է Մատենադարանի տնօրեն, նաև համատեղության կարգով եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմաբանասիրական հանդեսի պատասխանատու քարտուղարը (1958-1960 թթ), փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող՝ 1972-1979թթ: Սեն Արևշատյանը 1975-1978թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում: Մինչև 2014թ. այդ ինստիտուտի գիտաթեմատիկ խմբի գիտական ղեկավարն էր: 1982թ. Սեն Արևշատյանն ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Ակադեմիկոս Արևշատյանը 25 տարի՝ 1982-2007 թվականներին եղել է Մատենադարանի տնօրեն, իսկ 2007-2014թթ. Մատենադարանի կառավարման խորհրդի նախագահ^[1]:

Գիտական գործունեությունը

Սեն Արևշատյանը հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատությունների, այդ թվում 30 մենագրությունների և բազմաթիվ հոդվածների, որոնք լույս են տեսել ոչ միայն

Հայաստանում, այլև՝ Մոսկվայում, Փարիզում, Վարշավայում, Շտուտգարտում, Սանկտ Պետերբուրգում, Աթենքում, Կահիրեում և այլուր: Դրանք վերաբերում են հիմնականում հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմությանը, բայց դրանց ընդգրկումն իրականում շատ ավելի լայն է, իսկ տեսական առումով դրանք պարունակում են հայկական մշակույթի և նրա պատմությանը վերաբերող ընդհանուր տեսական հարցադրումներ: Այս տեսակետից գիտական լուրջ արժեք են ներկայացնում նրա «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները», «Միջնադարյան Հայաստանի դպրոցների պատմության շուրջը», «Փիլիսոփայական գիտության ձևավորումը հին Հայաստանում (5-6-րդ դարեր)», «Ղավիղ Անհաղթ» և այլ մենագրություններ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է նոր գաղափարներ, մշակույթի պատմության ժամանակաշրջանների նոր իմաստավորում, գրավոր հուշարձանների նոր ընթերցում: Պրոֆեսոր Արևշատյանի գիտական գործունեության կարևոր մասն են կազմում հայ ականավոր իմաստասերներ Մեսրոպ Մաշտոցի, Եզնիկ Կողբացու, Ղավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Հովհան Ռոտունեցու, Գրիգոր Տաթևացու երկերի ռուսերեն թարգմանությունները:

Մահացել է հայտնի լեզվաբան Զովհաննես Բարսեղյանը

02 Օգոստ. 2014



Հովհաննես Խաչատուրի Բարսեղյան: Լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ Նախագահի մրցանակակիր (2003), Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի ասպետ (2010):

Ծնվել է 1920թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ Թալինի շրջանի Մաստարա գյուղում: Ավարտելով տեղի յոթնամյա և Թալինի միջնակարգ դպրոցները՝ 1938թ. ընդունվել է ԵՊՀ լեզվագրական ֆակուլտետ: 1941-ին 4-րդ կուրսից զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Երրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո 1943թ. գորացրվել է, շարունակել ուսումնառությունը և 1944թ. ավարտել համալսարանը: 1945-1948թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում:

1952թ. պաշտպանել է թեկնածուական, 1981-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1955թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1984-ին՝ պրոֆեսորի կոչում: 1946-1948թթ. Հովհ.Բարսեղյանը եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի, այնուհետև՝ մինչև 1958թ., Երևանի հեռակա

պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի դասախոս: 1958թ. նա կրկին տեղափոխվել է ԵՊՀ և 1969-ին ընտրվել հայոց լեզվի ամբիոնի վարիչ: 1977-1985թթ. եղել է բանասիրության ֆակուլտետի դեկան, 1985-1990թթ.՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր-վարիչ:

Հովհ.Բարսեղյանը հեղինակ է մի քանի տասնյակ գիտական հոդվածների, ավելի քան 20 մենագրության, այդ թվում՝ «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (Եր., 1953), «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» (Եր., 1967), «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները» (Եր., 1975), «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» (Եր., 1980): Սկսած 1964թ.նրա խմբագրությամբ լրացումներով ու մեկնություններով պարբերաբար լույս է տեսնում «Տերմինաբանական ուղեցույցը» (վերջինը Եր., 2006):

Հովհ.Բարսեղյանը նաև հմուտ բառարանագիր է (տե՛ս «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան», Եր., 1973): Նա պրոֆեսորներ Թ.Խ. Հակոբյանի և Ստ.Տ.Մելիք-Բախշյանի հետ համահեղինակ է հիմնադրել «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (Եր., 1986-2001): Գործընկերների վախճանվելուց հետո նա է խմբագրել ու հրատարակության պատրաստել հիշյալ բառարանի վերջին երկու ստվարածավալ հատորները: 2003թ. այդ եզակի բառարանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի: Հովհ.Բարսեղյանի համահեղինակությամբ են կազմվել հանրակրթական դպրոցի 4-րդ (Եր., 1970) և 5-7-րդ (Եր., 1965) դասարանների «Հայոց լեզու» դասագրքերը:

Հովհ.Բարսեղյանը 1969-1972թթ. եղել է ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղար: 1955-ից նա կատարել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի, իսկ 1992-ից ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի գիտքարտուղարի պարտականությունները: 1970թ. Հովհ.Բարսեղյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» (1981), Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի (1985) շքանշաններով, «Մովսես Խորենացի» և բազմաթիվ այլ մեդալներով:

Ջայաստանում քեսաբահայ 30 - 40 ընտանիք է մնացել



Հովիսի 02, 2014
Բոլոր քեսաբահայերն առանց բացառության ցանկանում են Սիրիայի իրենց տները վերադառնալ: Այս մասին հուլիսի 2-ի մամուլի ասուլիսում հայտարարել է Հայաստանի հանրային պալատի անդամ, Քեսաբի

հարցերով հունիսին ստեղծված աշխատանքային խմբի անդամ Գագիկ Մինասյանը:

Ըստ նրա՝ Հայաստանում քեսաբահայ 30 - 40 ընտանիք է մնացել: Ես վստահ եմ, որ քեսաբահայերի մեծամասնությունը կվերադառնա Սիրիա: Այն մեր ամենակայացած համայնքն է եւ հարկավոր է պահպանել», - ընդգծել է Գագիկ Մինասյանը:

Մամուլի ասուլիսի մեկ այլ բանախոս Եպիսկոպոս Մարկոս Հովհաննիսյանն իր հերթին նշել է, որ Քեսաբի բոլոր եկեղեցիներն ավերվել էին, սակայն այժմ վերականգնման փուլում են:

Հիշեցնենք, մարտի 21-ի առավոտյան հիմնականում հայերով եւ ալեհիներով բնակեցված սիրիական Քեսաբ քաղաքը ենթարկվել էր սիրիական ընդդիմության զինված խմբավորումների լայնածավալ հարձակման: Երկու խոշոր ահաբեկչական խմբավորումներ Սիրիայի վրա հարձակվել էին Թուրքիայի տարածքից: Քեսաբի բնակչության մեծ մասը տարհանվել էր Լաթաքիա քաղաք: Կառավարական ուժերը Քեսաբն ազատագրել են հունիսի 15-ին:

ՆԱՏՕ-ի ներկայացուցիչը լռությամբ շրջանցել է Թուրքիայի կողմից Քայաստանը շրջափակելու հարցը



Հուլիսի 10, 2014


ՆԱՏՕ-ի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի համակարգող Ղեսայինա Աֆենտուլին լռությամբ շրջանցել է այն հարցը՝ արդյո՞ք հարեւան պետության սահմանի շրջափակումը մտնում է այն սկզբունքների մեջ, որով առաջնորդվում է դաշինքը:

Այսօր՝ հուլիսի 10-ին, Երեւանում կայացած մամուլի ասուլիսին ՆԱՏՕ-ի ներկայացուցչին հարց է տրվել, թե Թուրքիան Հայաստանի հետ սահմանակցող ՆԱՏՕ-ի միակ երկիրն է, որ արդեն երկու տասնամյակ շրջափակում է Հայաստանի հետ իր սահմանը եւ պատրաստվում է Ադրբեջանի հետ ռազմական օգնության համաձայնագիր ստորագրել: Ի պատասխան՝ ՆԱՏՕ-ի ներկայացուցիչը երկար պատմել է, որ դաշինքն իր հարաբերությունները կառուցում է յուրաքանչյուր երկրի առանձնահատկություններից ելնելով: Համապատասխանաբար, յուրաքանչյուր երկիր ինքն է սահմանում ինտեգրման աստիճանն ու հարաբերությունների մակարդակը: ՆԱՏՕ-ի ներկայացուցիչը ընդգծեց, որ դաշինքը հարգում է բոլոր երկրներին, նրանց տարածքային ամբողջականությունն ու անկախությունը: Ընդ որում՝ դաշնակից երկրները ընդհանրապես պարտավոր չեն ենթարկեցնել իրենց

որոշումները ՆԱՏՕ-ի կարծիքին: Այդուհանդերձ, արտաքին քաղաքականությունը չպետք է հակասի ՆԱՏՕ-ի ընդհանուր սկզբունքներին:

Հարցին՝ հարեւան երկրների սահմանների շրջափակումը, ինչպես նաեւ այն, որ Թուրքիան օգնում է Հայաստանի դեմ նոր պատերազմի պատրաստվող Ադրբեջանին, բխո՞ւմ է արդյոք ՆԱՏՕ-ի սկզբունքներից, ՆԱՏՕ-ի ներկայացուցիչը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն նման հաշվարկներ չունի: Նրա խոսքով՝ ՆԱՏՕ-ն տեղյակ է Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ տարածայնություններին եւ նախկինում նպաստել է հարաբերությունների կարգավորման ուղիների որոնման փորձերին:

Երեւանի եւ Սպահանի միջեւ փոխգործակցությունը արդյունավետ է. Տարոն Մարգարյան



Երեւանի եւ Իրանի գործընկեր քաղաքների միջեւ հաստատված բարեկամական կապերը ջերմ են, տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունն էլ՝ արդյունավետ: Այս մասին, այսօր՝ հուլիսի 29-ին, Իրանի Սպահան քաղաքի 5-րդ շրջանի (Նոր Ջուղա) ղեկավար Համիդ Ասարգաղեգանի հետ հանդիպման ժամանակ նշել է Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը: Երեւանի քաղաքապետը կարելորել է ինչպես Սպահանի, այնպես էլ Թեհրանի, Թավրիզի եւ Շիրազ քաղաքների հետ ձեւավորված համագործակցությունը: Անդրադառնալով, մասնավորապես, Երեւանի եւ Սպահանի միջեւ ձեւավորված գործընկերային հարաբերություններին՝ Տարոն Մարգարյանը նկատել է, որ երկու քաղաքների բարեկամության մեկնարկը տրվել է դեռեւս 1995թ. եւ, որպես Երեւանի քույր քաղաք, ներկայումս էլ առանձնակի կարելորված է Երեւանի եւ Սպահանի միջեւ բարեկամական եւ գործընկերային հարաբերությունների զարգացումը: «Վերջին տարիների երկկողմ այցերը եւս փաստում են, որ երկու քաղաքների միջեւ կա համագործակցության լայն դաշտ եւ մենք մեր լիազորությունների շրջանակում պետք է էլ ավելի ընդլայնենք համագործակցության ծրագրերն ու շրջանակները՝ ի բարօրություն մեր քաղաքների բնակչության: Հարկ է նկատել, որ երկկողմ շփումները երկու ժողովուրդների միջեւ կարելոր են նաեւ միմյանց ճանաչելու, ազգային ավանդույթներին եւ մշակույթին հարողակից դարձնելու առումով», - ընդգծել է Տարոն

Մարզարյանը, նաեւ նկատել, որ շատ իրանցիներ այսօր բնակվում, սովորում եւ աշխատում են Երեւանում: Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Սպահան քաղաքի 5-րդ շրջանի (Նոր Զուղա) ղեկավար Համիդ Ասարգադեգանն իր հերթին վստահեցրել է, որ իր գործուն աջակցությունը կունենա Երեւանի եւ Սպահանի միջեւ կապերի էլ ավելի սերտացման ու նոր ծրագրերի իրականացման հարցում. «Երկուստեք համագործակցությունն անչափ կարելի է, հատկապես քաղաքային տնտեսության որոշակի ոլորտներում նկատվող համանման խնդիրների շուրջ համատեղ լուծումներ գտնելու, այդ թվում նաեւ փորձի փոխանակման տեսակետից: Ինձ համար, պարոն քաղաքապետ, շատ հաճելի է գտնվել Երեւանում, եւ ես համոզված եմ, որ Երեւանն ու Սպահանն իսկապես ունեն մեծ ներուժ համատեղ ծրագրերի իրականացման համար: Եվ, հանդիսանալով Սպահանի ամենահայաշատ շրջանի ղեկավարը, վստահեցնում եմ Ձեզ, որ իմ լիազորությունների շրջանակում կանեմ հնարավորը՝ երկուստեք կապերն առավել ամրապնդելու եւ զարգացնելու ուղղությամբ», - ընդգծել է Համիդ Ասարգադեգանը:

Հանդիպման վերջում Տարոն Մարզարյանը մեկ անգամ եւս ընդգծել է, որ Երեւանի քաղաքապետարանը միշտ բաց է համագործակցության համար եւ պատրաստ է քննարկել ցանկացած առաջարկ, որը կնպաստի երկու երկրների քաղաքների միջեւ գործընկերային հարաբերությունների զարգացմանը:

Արցախ

Անցած շաբաթ հակառակորդն արձակել է 7500 կրակոց



Հուլիսի 05, 2014

Արցախի ՊԲ օպերատիվ տվյալների համաձայն, հունիսի 29-ից հուլիսի 5-ն ընկած ժամանակահատվածում դարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմը խախտվել է շուրջ 600 անգամ, որի ընթացքում, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից, հայ դիրքապահների ուղղությամբ արձակվել է ավելի քան 7500 կրակոց: ՊԲ առաջապահ զորամասերը համարժեք պատասխան են տվել հակառակորդի սադրիչ գործողություններին և շարունակել վստահորեն իրականացնել մարտական հերթապահությունը:

Հակառակորդը խոշոր տրամաչափի հրազենից գնդակոծել է Բարեկամավանը. ՊՆ

02.08.2014



Հայ-ադրբեջանական սահմանագոտու հյուսիսարեւելյան հատվածում՝ ադրբեջանական Քեմեռլի բնակավայրի ուղղությամբ տեղակայված դիրքերից, օգոստոսի 2-ին, հակառակորդը խոշոր տրամաչափի հրազենից գնդակոծել է Բարեկամավան գյուղը:

«ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ հակառակորդի կրակակետերը լռեցնելու նպատակով պատասխան կրակ է բացվել ադրբեջանական դիրքերի եւ Քեմեռլի բնակավայրում տեղակայված ադրբեջանական ՋՈւ ստորաբաժանմանումների ուղղությամբ: Ըստ նախնական տվյալների՝ ադրբեջանական կողմը կրել է զգալի կորուստներ: Հայկական կողմից զոհեր եւ վիրավորներ չկան: «Չ գինված ուժերը շարունակում են վերահսկել իրավիճակը շփման գծում:

Նոր տվյալներ. ադրբեջանական կողմն ունի 7 զոհ. ԼՂՀ ՊԲ

02.08.2014



ԼՂՀ պաշտպանության նախարարությունը նոր տվյալներ է հաղորդել այս գիշեր ադրբեջանական դիվերսիոն խմբի գործողությունների հետեւանքով զոհերի մասին: ԼՂՀ ՊՆ մամուլի կենտրոնի տարածած հաղորդագրության մեջ ասվում է. «Օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան /Մարտակերտ/ ուղղությամբ

հակառակորդի կողմից ձեռնարկված դիվերսիոն ներթափանցման արդյունքում, ադրբեջանական բանակը տվել է 5 զոհ եւ երեք վիրավոր, ինչը հաստատել է նաեւ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, իսկ արեւելյան /Մարտունու/ ուղղությամբ հակառակորդի կորուստները կազմում են 2 զոհ եւ 4-ից ավելի վիրավոր: ՊԲ առաջապահ զորամասերի կազմակերպված դիմադրության արդյունքում, հակառակորդը խուճապահար ելման դիրքեր փախչելու ճանապարհին, մարտադաշտում թողել է մեծ քանակությամբ հատուկ նշանակության զինատեսակներ եւ տեխնիկական միջոցներ: Ադրբեջանական զինուժից առգրավված զինատեսակներն են 1 ձեռքի հակատանկային նռնականետ, 2 ձեռքի նռնականետ /PG-7 ATP/, 3 թերմոբարիկ նռնակ, 3 պահեստատուփի պայուսակ, 3 վառոդային լիցք, 2 ձեռքի նռնականետ /PG-6/, 12 հատ ԵՄԳ-Կ տեսակի նռնակ PG-6 ձեռքի նռնականետի համար, 2 ինքնաձիգ /AKM, 7.62 մմ/, 20 ինքնաձիգ պահունակ, 100 եւ 200 փամփուշտ տեղավորող գնդացրային 1-ական պահունակ, 2 կապի միջոց /Тадиран ПНР-500/, 2 հակատանկային ական /ТМ-57/, 8 մեկանգամյա նռնականետի կոնտեյներ, 2 հակատանկային ական /МОН-50/, 2 ձայնալուսային նռնակ, 1 տափաշիշ, 1 հարձակողական նռնակ, 4 նռնակ РГД-5 տեսակի, 1 ջերմացուցային նշանոց՝ իրայելական արտադրության, 1 ձեռնաշղթա, 2 լրակազմի համազգեստ, 1 ոտնակ, 1 հասարակ ջրի շիշ՝ փաթեթավորված մեկուսաժապավենով, 1 դաշտային պայմաններում վիրավոր դուրս հանելու պատգարակ: Հայկական դիրքապահների կողմից հակառակորդի թիկունքում գտնվող Սարիջալի բնակավայրի շրջանում դիտարկվել են նաեւ վայրէջք կատարող 2 ուղղաթիռներ, որոնք ամենայն հավանականությամբ ժամանել են վիրավորներին եւ զոհերի դիակները տեղափոխելու նպատակով»:

Արցախի փոխվարչապետը ներդրումներ է ակնկալում սփյուռքահայերից



Հուլիսի 04, 2014

ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը հուլիսի 3-ին հանդիպել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մասնաձյուղի մի խումբ անդամների:

ԼՂՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնում են,

թե, ողջունելով բարերարներին, Ա. Աղաբեկյանը ամփոփ ներկայացրել է Արցախի զարգացման գործում Հիմնադրամի կատարած աշխատանքների մասին՝ նշելով, որ 21-րդ դարում հայապահպանության թիվ մեկ խնդիրներից է զարգացած ու հզոր հայրենիք կառուցելը, որին պետք է ուղղված լինեն համահայկական ջանքերը: Խոսելով հայրենիքում իրենց ստացած տպավորությունների մասին՝ ֆրանսիահայ համայնքի ներկայացուցիչներն, օգտվելով հանդիպման հնարավորությունից, հարցադրումներ են կատարել Արցախի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ: Ա. Աղաբեկյանը, մասնավորապես, նշել է, որ տնտեսության զարգացման համար ԼՂՀ իշխանությունների կողմից մեծ ուշադրություն է դարձվում հատկապես գործարար միջավայրի ձեւավորմանը:

Զուգահեռաբար, կարելի էր նաեւ խոսել մատնանշել է Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի եւ այդ ուղղությամբ Արցախը Հայաստանին կապող երկրորդ օդային էլեկտրական գծի կառուցման ծրագրերը: Աղաբեկյանը ընդգծել է, որ եթե տարիներ առաջ Սփյուռքից միայն օգնություն էր սպասվում, ապա այսօր փոխվել են մոտեցումները. ցանկալի է, որպեսզի սփյուռքահայ գործարարները Արցախում բիզնեսի նպատակով ներդրումներ կատարեն, որոնք կստեղծեն նոր աշխատատեղեր:

Պատասխանելով Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկման վերաբերյալ հնչեցված հարցին՝ Ա. Աղաբեկյանը նշել է, որ այդ ուղղությամբ Արցախում ակնկալում են միջազգային հանրության աջակցությունը եւ կոչ է արել, որպեսզի սփյուռքի համայնքներն այս հարցում եւս իրենց երկրներում ակտիվ ներգրավվեն քարոզական աշխատանքներում:

Արցախում շոշ գյուղը համայնքային կենտրոն կունենա



Հուլիսի 07, 2014

ԼՂՀ Ասկերանի շրջանի Շոշ գյուղում կառուցվող նոր համայնքային կենտրոնի շնորհիվ գյուղի շուրջ 610 բնակիչները կունենան բարեկարգ բուժկետ, գրադարան, համակարգչային սենյակ, ինչպես նաեւ գյուղապետարան:

Հայաստան համահայկական հիմնադրամից հայտնում են, որ կից հանդիսությունների սրահում էլ համայնքը կանցկացնի իր հավաքները:

Գյուղի դպրոցն էլ կառուցվել է 2004թ.-ին Հիմնադրամի Տորոնտոյի տեղական մարմնի աջակցությամբ, որը շարունակում է հոգալ դպրոցի ու դպրոցականների կարիքները: Վերջին տարիներին կրթօջախն ապահովվել է միկրոավտոբուսով, ինտերնետային ցանցով: Իսկ արտերկրում բնակվող հայազգի բարերար ամուսիններն էլ դպրոցի աշակերտներին նվիրաբերել են գեղեցիկ դպրոցական համազգեստներ: Ֆինանսավորումը՝ Հայաստան համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի եւ ԼՂՀ կառավարության:

Արեւմտյան Հայաստան

Թուրքիայում հայկական եկեղեցու փլատակերում 2000 տարվա հնության սեպագիր է հայտնաբերվել



Հուլիսի 11, 2014

Ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող պատմականորեն հայկական Սասունի շրջանի Մարութա սարի սբ. Աստվածածին հայկական եկեղեցու փլատակներում հայտնաբերվել է նախաքրիստոնեական ժամանակաշրջանի սեպագիր: Այդ մասին գրում է «Nouvelles d'Arménie» թերթը՝ վկայակոչելով «Haber MyNet» թուրքական թերթը:

Հնագիտական պեղումների ժամանակ եկեղեցու տարածքում Մարութա սարի գագաթին 10 հնագետներից բաղկացած թիմը Սասունի Հայերի միության նախագահ Ազիզ Դադջընի գլխավորությամբ, հայտնաբերել է հնագույն շինության մնացորդները: Բացահայտումն արվել է սբ. Աստվածածին եկեղեցու



վերակառուցման ժամանակ: Թիմը քարի վրա խաչեր է հայտնաբերել, սեպագիր, ինչպես նաև ծիերի եւ այլ կենդանիների փորագրումներ: Այդ առիթով Սասունի Հայերի միության նախագահը հայտարարել է. «Մենք մեր գտածոները վստահել ենք

Բաթման թանգարանի ղեկավարության անդամներին: Մենք կուսումնասիրենք լուսանկարներն ու իրերը Ստամբուլի հայության արքեպիսկոպոսի հետ: Կարծում ենք, որ սբ Աստվածածնի եկեղեցու մոտակայքում՝ լեռան 2973 մ բարձրությամբ լեռան գագաթին մեր հայտնաբերած իրերը 2000-ամյա վաղեմություն ունեն»:

Թուրքիայի հարավ-արեւելքում հայտնաբերվել են մեծ թվով հնագույն կավե բառանիչեր

Հուլիսի 14, 2014

Թուրքիայի հարավ-արեւելքում հնագիտական պեղումների ժամանակ հետազոտողները հայտնաբերել են հսկայական քանակության կավե բառանիչեր, որոնք գրերի հայտնաբերումից շատ առաջ օգտագործվել են առեւտրի գրանցման համար, ասվում է Cambridge Archaeological Journal ամսագրում հրատարակած հոդվածում:

Հոդվածում ասվում է, որ կավե բառանիչերը կարող էին օգտագործվել նախապատմական ժամանակներում՝ որպես հաշվապահական հաշվառման սաղմնային համակարգ: Հնագետները նաև պարզաբանել են, որ այս համակարգը օգտագործվել է մեր թվագրությունից 3000 տարի առաջ, առաջին կավե աղյուսակների եւ հետեւապես, գրերի առաջացման ժամանակ:

Եվ մի քանի հարյուր տարի հետո բառանիչերի թիվը կտրուկ կրճատվել է, ինչը պարզ է դարձնում, որ գրերը աստիճանաբար դուրս են մղել առեւտրի վարման այս համակարգը: Սակայն Ջիյարաթ Թեպեում վերջին պեղումների արդյունքում Տուշան հնագույն քաղաքի տեղում հայտնաբերվել են մեր թվարկությունից առաջ առաջին հազարամյակի թվագրությամբ բառանիչեր:

Գիտնականները ենթադրում են, որ այդ բառանիչերն օգտագործվել են հիմնականում գյուղատնտեսության հաշվառման համար, եւ յուրաքանչյուր գյուղացի պետք է որոշակի թվով բառանիչ ապահովեր որոշակի թվով անասունների համար: Այդ բառանիչերի ձեւերը տարբեր են կան եւ շրջանաձեւ եւ քառակուսի, եւ եռանկյունի բառանիչեր, ինչպես նաև իրենց ձեւով ցուլի գլուխ հիշեցնող բառանիչեր:

Թաքնված գանձ. Սուրբ Բարդուղեմեոսի բացառիկ լուսանկարները



Թուրքիայի տարածքում գտնվող եւ մինչ այժմ այցելությունների համար փակ համարվող հայտնի հայկական եկեղեցիներից եւս մեկը հայտնվել է NEWS.am-ի ֆոտոխցիկի առաջ:

Երկար տարիներ թուրքական զորամասի տարածքում գտնվող Վանի Բաշքալեի (Աղբակի) շրջանի Սուրբ Բարդուղեմեսու եկեղեցին մասնակիորեն ազատվել է գերությունից՝ զորամասի տեղափոխման հետևանքով:

NEWS.am-ի ֆոտոխցիկը կարողացել է մուտք գործել զորամասի տարածք եւ ֆիքսել Սուրբ Բարդուղեմեսուի գեղեցկությունը:

Ցավոք, եկեղեցին կիսավեր վիճակում էր, սակայն նրա գեղեցկությունը դրանից չէր խամրել: Հայտնի չէ, թե ինչ վիճակում կլինեն եկեղեցին, եթե չլինեն զորամասի տարածքում եւ ենթարկվեր հայերի զանծերը փնտրող սրբապիղծ գանձագողերի հարձակումներին:

Ըստ ավանդության եկեղեցին հիմնադրել է հայոց Սանատրուկ թագավորը Սուրբ Բարդուղեմեսու առաքյալի գերեզմանի վրա: Միջնադարում այն եղել է Աղբակ գավառի առաջնորդանիստ վանքը եւ կարեւոր ուխտատեղի:

Եկեղեցուն արեւմուտքից կից գավթի շքամուտքին քանդակված են գահին բազմած Հայր Աստված, Քրիստոս և աղավանակերպ Սուրբ Հոգին: Սուրբ Երրորդության այս պատկերաքանդակը տվյալ թեմայով լավագույն ստեղծագործություններից է: Ներկայում այս պատկերաքանդակը կիսով չափ ավերված է:

Վանի նահանգապետը ամիսներ առաջ այցելել է Սուրբ Բարդուղեմեսու եւ հայտել, որ եկեղեցին անպայման վերանորոգվելու է եւ բացվելու է տուրիզմի համար:

«Herald Sun». Անին աշխարհի մեծագույն մայրաքաղաքներից է եղել



Ավելի քան 1600 տարի առաջ հիմնադրված հնագույն Անի քաղաքը եղել է աշխարհի հզորագույն մայրաքաղաքներից մեկը: Այսօր այն ավերակների է վերածվել, որի փառքը մնացել է որպես հեռավոր հիշողություն: Այս մասին գրում է ավստրալական «Herald Sun» պարբերականը:

Թուրքիայի արեւելյան հատվածում՝ աշխույժ Ստամբուլից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող Անին առեւտրային մի քանի ճանապարհների խաչմերուկում է: 11-րդ դարում այն դարձել է պատերով շրջապատված քաղաք՝ ավելի քան 100 հազար բնակչությամբ: Իր փառքի գագաթնակետին Անին շքեղության, հիասքանչության եւ ճարտարապետական հրաշքների քաղաք է եղել: Այն Հայկական հզոր կայսրության մայրաքաղաքն ու սիրտն էր:

Անին հայտնի է որպես հազար եկեղեցիների քաղաք, նրա պաշտամունքի վայրերը, պալատներն ու ամրոցները տեխնիկական եւ գեղարվեստական

առումով աշխարհի ամենից զարգացած կառույցներն էին: Բոլոր շինությունները կառուցվել են տեղական հրաբխային բազալտից, որը դյուրին էր մշակելն ու որի տարբեր վառ գույները կային:

Ավելի քան 700 տարի հիմնականում մոռացության մատնված նրա ավերակները թուրք վանդալների թիրախում են եղել, որոնք փորձում էին այդ տարածքներից ջնջել հայկական հետքը եւ վատ էին կազմակերպում հնագիտական պեղումները:

Այսօր Անին գտնվում է Թուրքիայի եւ Հայաստանի սահմանին, որոնց դիվանագիտական հարաբերությունները սառն են եղել նույնիսկ լավագույն ժամանակներում:

Ստամբուլի հայկական «Նոր զարթոնք» իր աջակցություն է հայտնել Թուրքիայի նախագահի քուրդ թեկնածուին



Հուլիսի 14, 2014

Թուրքիայում հայերի կողմից ստեղծված «Նոր զարթոնք» քաղաքացիական շարժումն իր աջակցություն է հայտնել Թուրքիայի նախագահական ընտրություններում «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության կողմից նախագահի թեկնածու առջադրված Սելահաթին Դեմիրթաշին:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ «Նոր զարթոնքի» տարածած հայտարարության մեջ նշվել է. «Ցեղասպանությունը ժխտողներին, գողերին ու ստախոսներին ձայն չկա: Նախագահի մեր թեկնածուն Սելահաթին Դեմիրթաշն է»:

Նշենք, որ Սելահաթին Դեմիրթաշը բազմիցս դատապարտել է Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը եւ այնպես, որ Թուրքիան պետք է ճանաչի Ցեղասպանությունը:

Սելահաթին Դեմիրթաշը ծնվել է 1973-ի ապրիլի 10-ին, Խարբերդի Բալուի շրջանում: Ավարտել է Անկարայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, որից հետո երկար տարիներ զբաղվել է փաստաբանական գործունեությամբ:

Թուրքիայում լույս կտեսնի համշենահայերենով առաջին ամսագիրը

Հուլիսի 14, 2014

Մի խումբ համշենահայեր Համշենի լեզուն եւ մշակույթը տարածելու եւ այն հետագա սերունդներին փոխանցելու

նպատակով պատրաստվում են տպագրել համշենահայերենով առաջին ամսագիրը Թուրքիայում: Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, հանդեսը կկրի «Գոր» (համշենահայերենով՝ կամավոր աշխատանք) անվանումը: Խումբը սույն ամսագրի հրատարակմանն աջակցելու կոչ է արել բոլոր համշենցիներին՝ հանդես գալով «Գիրի գոր ունիք, դուք ալ թե ձգեցեք» (համշենահայերեն՝ «Գրի մեր կամավոր աշխատանքին դուք էլ մասնակցեք») կարգախոսով: Աղբյուրի համաձայն՝ Սեւծովյան շրջանի հնագույն ժողովուրդներից համշենցիները ներկայում տենդագին աշխատանքների մեջ են: Համշենցի ուսումնասիրողներից, գրողներից, լրագրողներից, երաժիշտներից եւ ուսանողներից բաղկացած այս խումբը ցանկանում է «Գոր» ամսագրի առաջին համարը թողարկել սույն թվականի սեպտեմբեր ամսին: Նախատեսվում է հանդեսն առայժմ հրատարակել վեց ամիսը մեկ եւ հետագայում հնարավորություն ստեղծել, որպեսզի դրա պատրաստման աշխատանքներին մասնակցեն մեծ թվով համշենահայեր: Ամսագրի 90 տոկոսը բաղկացած է լինելու միմիայն համշենահայերեն նյութերից: Այս առումով այն աննախադեպ կլինի Թուրքիայում:

Չայտնի հայ լուսանկարիչը թուրքական համալսարանի «պատվո դոկտորի» կոչում է ստացել



Հուլիսի 02, 2014

«Դարի լավագույն լուսանկարիչ» ճանաչված ստամբուլահայ Արա Գյուլերը Բողազիչի համալսարանի կողմից արժանացել է «պատվո դոկտորի» կոչման: Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ Բողազիչի համալսարանի Ալբերտ Լոնգ սրահում ռեկտոր Գյուլայ Բարբարոսօղլուի կողմից «պատվո դոկտորի» կոչման հավաստագիրն անձամբ հանձնվել է Արա Գյուլերին: Ռեկտորն իր խոսքում նշել է, թե Թուրքիայի պատմությունն ու առօրյան Արա Գյուլերի միջոցով ներկայացվել է աշխարհին, որի համար էլ մեծ լուսանկարիչն արժանացել է իրենց համալսարանի «պատվավոր դոկտոր» կոչմանը: Նշենք, որ Արա Գյուլերը, ում նաեւ անվանում են «Ստամբուլի աչք», ծնվել է 1928-ին Ստամբուլում: 1950-ին սկսել է լրագրողական գործունեությունը Yeni İstanbul պարբերականում:

Արա Գյուլերը ստացել է բազմաթիվ մրցանակներ եւ տիտղոսներ թե՛ Թուրքիայում, թե՛ աշխարհի ամենահայտնի կազմակերպությունների կողմից: Իրականացրել է ֆոտոռեպորտաժներ համաշխարհային պատմության հայտնի դեմքերի, այդ թվում՝ Ուինսթոն Չերչիլի, Առնոլդ Թոյնբիի, Բերթրանդ Ռասելի, Պիկասոյի, Սալվադոր Դալիի եւ այլոց հետ:

Ստամբուլի «Ակոս» թերթի կայքը հաքերային հարձակման է ենթարկվել



Հուլիսի 09, 2014

Չորեքշաբթի Ստամբուլի թուրք-հայկական «Ակոս» թերթի կայքը ենթարկվել է հաքերային հարձակման: Նրանք, ամենայն հավանականությամբ, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմնակիցներն են: Այս մասին գրում է թուրքական «Today's Zaman» պարբերականը: «Դուք կոտրվել եք, պարոնայք», - ասված էր հաքերի կամ հաքերների թողած հաղորդագրությունում, ովքեր իրենց կոչում են «Herakles Fearlesleon»: Հաղորդագրության կողքին տեղադրված է եղել Թուրքիայի վարչապետ Էրդողանի լուսանկարը՝ կանգնած օսմանյան դրոշմակնիքի առջեւ: «Մենք բազմաթիվ դավաճանների ենք տեսել, ինչպիսին դուք եք, եւ գիտենք, թե ինչ եք պատրաստվում անել: Բայց այս պահից մենք այստեղ ենք: Օսմանյան հզոր պետությունը վերածնվում է հզոր պարոն Ռեջեփ Թայիփ Էրդողանի օգնությամբ: Սրանք օսմանցիների քայլերի ձայներն են: Հակահայկական, հայաամերիկյան, հակախորալիական: Մենք արմատախիլ կանենք ձեզ», - գրել են հաքերները: Թուրքիայի հայկական ոչ մեծ համայնքը հակահայկական ատելության թիրախ է դարձել նաեւ անցյալում: Մասնավորապես, ժողովրդին ցնցեց 2007 թվականին Ստամբուլում «Ակոս»-ի խմբագրության շենքի առջեւ ազգայնամոլի կողմից թերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը:

Թուրքիայում ներկայացվել է հայոց լեզվի բաժնի ընդունելության անցողիկ միավորները

Թուրքիայում ներկայացվել է հայոց լեզու եւ գրականություն բաժնի համար անցողիկ միավորները եւ այդ բաժինն ունեցող համալսարանների ցանկը:

Թուրքական e-karaman.com կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայում երկու բուհ՝ Էրջիյեսի համալսարանը եւ Թրակիայի համալսարանը պատրաստ են դիմորդներ ընդունել հայոց լեզու եւ գրականություն բաժնում 4 տարի ուսուցման պայմանով:

Կայքը ներկայացնում է նաեւ անցողիկ միավորները, ըստ որի Էրջիյեսի համալսարանում հայոց լեզու եւ գրականություն բաժինն ընդունվել ցանկացողները պետք է ունենան ավատարական քննություններից հավաքած 230-ից 302 միավոր, իսկ Թրակիայի համալսարանում այդ բաժնում սովորել ցանկացողները՝ 213-ից 283 միավոր:

Նշենք, որ Թուրքիայում վերջին տարիներին խրախուսվում է հայերենի ուսուցումը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի համար մասնագետներ պատրաստելու համար: Այս մասին բազմիցս հայտարարել են Թուրքիայի համալսարաններում հայոց լեզվի եւ գրականության բաժնի վարիչները:

Թուրքերը պատմական Ուրֆայի բերդը այլ գույնի քարով են «եվրավերանորոգել»



Թուրքիայի հարավային մասում գտնվող Ուրֆայի (Եղեսիա, Ուռհա-խմբ) բերդի մի պատի վերանորոգումը բողոքի ալիք է բարձրացրել Ուրֆայի բնակչության շրջանում:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ 2013-ի ապրիլին հորդառատ անձրեւների հետեւանքով փլված Ուրֆայի 1200-ամյա պատմական բերդի պատի մի մասի վերանորոգումը շարունակվում է եւ նախատեսված է ավարտին հասցնել օգոստոսի ընթացքում:

Սակայն տեղի բնակչությունը եւ մի խումբ պատմաբանները բողոքել են պատի վերականգման մեջ սպիտակ քար օգտագործելու եւ բերդի տեսքը զցելու դեմ: Բնակչությունը պնդում է, որ պետք է բերդի հին քարերով վերականգնել պատը, սակայն իշխանությունները շեշտում են, թե բերդի նորակառույց պատը ժամանակի ընթացքում կնմանվի հին պատերին: Նշենք, որ ամիսներ առաջ Ուրֆայի բերդի մոտ հայտնաբերվել են հայերի գերեզմաններ, որտեղ նաեւ գտնվել են սրբապատկերներ:

Օգալը ժամանակին առաջարկել է հետդարձի հնարավորությունն ստեղծել Վանի հայերի համար

Օգոստոսին նախատեսվող Թուրքիայի նախագահական ընտրություններին որպես թեկնածու առաջադրված էքմեւլեդիին Իհսանօղլուն Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության խնդրի լուծման առումով ճիշտ է

գնահատում ժամանակին Թուրքիայի Հանրապետության ութերորդ նախագահը եղած Թուրքութ Օգալի մոտեցումը: Այդ մասին, Akunq.net-ի փոխանցմամբ, գրում է պոլսահայ լրագրող Հրանտ Գասպարյանը:

Ըստ աղբյուրի՝ նախընտրական քարոզարշավի շրջանակներում կայացած մի հանդիպման ժամանակ էքմեւլեդիին Իհսանօղլուն, պատասխանելով «Թարաֆ» օրաթերթի հայազգի լրագրող Հայկո Բաղդադի՝ Հայկական հարցի վերաբերյալ հարցին, նշել էր, որ տեղին է համարում Թուրքիայի կառավարության կողմից սույն թվականի ապրիլի 23-ին հրապարակված ապրիլքսանչորսյան ցավակցական ուղերձը և նաև ընդգծել, որ ժամանակին նմանատիպ դիրքորոշում էր ունեցել նաև Թուրքութ Օգալը:



Ինչպես հիշեցնում է Հրանտ Գասպարյանը, Օգալի հրահանգով Հայկական հարցի լուծման կարգավորման ուղղությամբ ժամանակին աշխատանքներ էին տարվում թե երկրի ներսում և թե արտերկրում: Թուրքիայի ութերորդ նախագահը «Խելացի մարդիկ» անվան տակ 8-10 հոգանոց մի խումբ էր կազմել՝ հիմնականում բաղկացած օսմաներենին տիրապետող պաշտոնաթող դիվանագետներից ու գեներալներից, ովքեր զեկույցներ էին ներկայացրել Օգալին:

Իսկ Օգալի կառավարման տարիներին Ազգային կրթության նախարարը եղած Վեհբի Դինչերլերը «Աքսիյոն» ամսագրին տված հարցազրույցում նշել էր, թե Օգալը 1984 թ. փորձում էր լուծել Հայկական հարցը և Ամերիկայի միջոցով ըմբռնել, թե կոնկրետ ինչ են հայերը պահանջում Թուրքիայից: Դինչերլերը նաև հայտնել էր, որ Օգալը մի աշխատանքային խումբ էր ստեղծել՝ օսմանահպատակ հայերի ժառանգները հանդիսացող սփյուռքահայերի վերադարձի համար ուղիներ որոնելու նպատակով և անգամ կոնկրետ նախագծեր մշակել այդ ուղղությամբ, որոնցից մեկն էլ կրում էր «Վանի պոլյեկտ» անվանումը: Թեև Օգալը գիտակցում էր, որ իր ժամանակաշրջանի մյուս պետական գործիչները լավ չէին վերաբերվի այդ նախագծին, սակայն այնուամենայնիվ 1988-89 թթ. կապեր էր հաստատել ԱՄՆ-ում գործող մի հայկական կազմակերպության հետ և քննարկել Վան նահանգի Էդրեմիթ շրջանի կողմերում մի հողատարածք հատկացնելու և հատուկ սփյուռքահայերի համար նախատեսվող մի հանգստյան տուն կառուցելու հարցը:

Ինչպես «Աքսիյոն» հանդեսին պարզաբանել էր Վեհբի Դինչերլերը, Թուրքութ բեյի նպատակն էր Թուրքիա բնակության հրավիրել տարեց սփյուռքահայերի՝ այդպիսով փորձելով թե ներդրումային դաշտ ստեղծել

երկրում և թե հարթել առկա խնդիրները: Սակայն Օզալի նախագիծը խիստ քննադատության էր ենթարկվել թուրքական մամուլի և հասարակայնության կողմից: Չանգվածային լրատվամիջոցներն անգամ լուրեր էին տարածել, թե «Օզալը Վանը տալիս է հայերին»: Չանգվածային լրատվամիջոցների բացասական արձագանքից հետո Օզալը սկսել էր անգամ ձնշումների ենթարկվել կուսակցության ներսում: Հարցը մինչև իսկ ընդգրկվել էր Ազգային անվտանգության խորհրդի օրակարգում, և զինվորականներն իրենց անհանգստությունն էին հայտնել, որի պատճառով նախագիծն այդպես էլ կյանքի չէր կոչվել:

Թուրք ազգայնականները բողոքում են, որ հայերն ազատ շրջում են Վանում եւ Կարսում



Հայաստանի հետ սահմանակից Թուրքիայի Իզմիր քաղաքում տեղակայված եւ ադրբեջանա-թուրքական ազգայնականների կողմից ֆինանսավորվող ASIMDER կոչվող հակահայկական կառույցը կոչ է արել թուրքական իշխանություններին Կարսում եւ Վանում ազատ շրջող եւ Հայաստանի դրոշը պարզող զբոսաշրջիկների դեմն առնել: Թուրքական Haber3 կայքի փոխանցմամբ՝ ASIMDER-ի նախագահ Գյուքսել Գյուլբեյը դիմել է Կարսի եւ Վանի իշխանություններին՝ բողոքելով, թե ինչու են նրանք թույլ տալիս, որ Հայաստանից ժամանած խմբերը Կարսի բերդում, Վանի Աղթամար կղզում Հայաստանի հիմնը երգեն եւ Հայաստանի դրոշը բարձրացնեն: «Ով է հայերին այդ վստահությունը տվել, որ ձեռքերը թափ տալով շրջում են Կարսի եւ Վանի փողոցներում: Եւ վերջում եղավ սարսափելին՝ Հայկական սփյուռքի եւ հայկական լրբի աջակցած գործողությունը իրականություն դարձավ Կարսի բերդում: Հայաստանից եկած խմբի անդամները Կարսի պարիսպների վրա Հայաստանի դրոշն են բացել եւ Հայաստանի հիմնը երգել: Նույն բանը նրանք արել են Վանում: Սրա դեմ պետք է միջոցառումներ ձեռնարկել եւ դեմներն առնել», - ասել է Գյուքսել Գյուլբեյը:

Թուրքական դատարանը հրաժարվել է «Սանասարյան հանը» վերադարձնել հայերին

Հուլիսի 04, 2014

Ստամբուլի վարչական գործերով 13-րդ դատարանը մերժել է Պոլսո հայոց պատրիարքարանի հայցը

«Սանասարյան հան» կոչվող շենքը պատրիարքարանին վերադարձնելու պահանջը: Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ Պոլսո հայոց պատրիարքարանի ներկայացուցիչ Ալի Էլբեյոլուն նշել է, թե բոլոր փաստաթղթերն ու շենքի վերադարձն ապահովող ապացույցներն առկա են, սակայն դատարանն անհասկանալիորեն մերժել է շենքը վերադարձնել պատրիարքարանին:



Ալի Էլբեյոլուն շեշտել է, թե օգտագործելու են իրավական մյուս ճանապարհները եւ բողոքարկելու են դատարանի կայացրած վճիռը եւ հարկ եղած դեպքում գործը կհասցնեն Եվրադատարան: Նշենք, որ «Սանասարյան հանը» կառուցվել է հայ բարեգործ Մկրտիչ Սանասարյանի կողմից 1895 թվականին: Շենքի ճարտարապետն է եղել Հովսեփ Ազնավուրը:

Թուրքական կայքը գովազդել է Թուրքիայի միակ հայկական գյուղը



Հուլիսի 11, 2014

Թուրքական Canli haber կայքը հրապարակում է ներկայացրել Թուրքիայի միակ հայկական գյուղի՝ Վաքըֆլըքոյի (Վազըֆ) մասին կոչ անելով այցելել այդ գյուղ:

«Թուրքիայի միակ հայկական գյուղը գտնվում է Հաթայ նահանգի Սամանդաղի շրջանում, Մուսա լեռան լանջերին: Այն 30 կմ է հեռու Սիրիայի սահմանից: Բացի այն, որ գյուղում միայն հայեր են ապրում, գյուղի մյուս կարեւոր հանգամանքն այն է, որ այնտեղ զբաղվում են օրգանիկ գյուղատնտեսությամբ:

Գյուղը օրգանիկ մրգեր արտահանելով միայն 2004 թվականին Թուրքիային ապահովել է 1 մլն եվրո եկամուտով: ՎագրՖ գյուղը պարգևատրվել է նաև Թուրքիայի ազգային օլիմպիական կոմիտեի կողմից հասարակական սպորտային ակտիվության մրցանակով: Գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին 1997 թվականին ամբողջական վերանորոգման է ենթարկվել եւ ստացել այսօրվա տեսքը: Այդ եկեղեցում գյուղի հայ բնակչությունն ամեն տարի շարունակում է նշել Սուրբ Ծնունդը, Սուրբ Ջատիկը, Սուրբ Աստվածածնի տոնը: Գեղեցիկ տեսարան ունեցող, օրգանիկ մրգեր ունեցող եւ ավանդույթները շարունակող գյուղը սպասում է այցելուների»,-գրել է Canli haber կայքը:

Միջազգային

Նիդերլանդների Օվերեյսել մարզի խորհրդարանը ճանաչել է հայոց ցեղասպանությունը



Յուլիս 03, 2014

Նիդերլանդների Օվերեյսել մարզի խորհրդարանը 2014 թ. հուլիսի 2-ի նիստում ընդունել է բանաձեւ, որտեղ արտահայտված է խորհրդարանի դիրքորոշումը անցած հունիսի մեկի թուրքական կազմակերպությունների բողոքի ցույցի հանդեպ, որն ուղղված էր Ալմենոյի հայկական եկեղեցու սեփական բակում տեղադրված հայոց ցեղասպանության հուշարձանի դեմ: Այս մասին հաղորդում է Նիդերլանդների հայկական կազմակերպությունների ֆեդերացիան:

Այդ ցույցի ընթացքում եղել են հայ ժողովրդի հասցեին անարգալից, զրպարտական եւ վիրավորական արտահայտություններ, որտեղ կոպտորեն հերքվել է հայոց ցեղասպանությունը: Բանաձեւը, որ ներկայացրել են Քրիստոնեական միություն (CU), Բարեփոխված քաղաքական կուսակցություն (SGP), Ազատության համար կուսակցություն (PVV) եւ Քրիստոնյա դեմոկրատական կոչ (CDA) խմբակցությունների պատգամավորները վկայակոչում է 1915-1918 թթ. Օսմանյան Կայսրությունում 1,5 միլիոն մարդկանց (հայերի, ասորիների եւ պոնտացի հույների), գազանաբար ջարդերը: Բանաձեւը հրաժարվում է ցեղասպանությունը ժխտողների բողոքի ցույցից եւ հայտնում է, որ ընդունում է հայոց ցեղասպանությունը, անդրադառնալով 2004 թ.

Նիդերլանդների խորհրդարանի ընդունած բանաձեւին: Սրանով մարզային խորհրդարանը հայերին ազդանշան է տալիս, որ նրանք իրավունք ունեն ունենալու իրենց զոհերի ոգեկոչման արժանի վայր:

2014 թ. հունիսի 1-ի թուրքական հանրահավաքի արտահայտությունների դեմ Համագործակցող հոլանդահայ կազմակերպությունները (Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիան (FAON) եւ Հոլանդիայի Հայ Դատի հանձնախումբը) անցած շաբաթ գանգատ են ներկայացրել Նիդերլանդների իրավապահ մարմիններին:

Գերմանիայի Բունդեսթագի հանդիսավոր նիստին հիշատակվել են 1915 թվականի հայկական ջարդերը



Հուլիսի 07, 2014

Գերմանիայի Բունդեսթագի հուլիսի 3-ի հանդիսավոր նիստին հիշատակվել են 1915 թվականի հայկական ջարդերը:

Հուլիսի 3-ին Առաջին համաշխարհային պատերազմի 100-ամյա տարելիցին նվիրված Գերմանիայի Բունդեսթագում տեղի է ունեցել հատուկ նիստ: Բացման խոսքով հանդես է եկել Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամմերտը:

Լամմերտը բացման իր խոսքում նշել է, որ Առաջին աշխարհամարտը նշանավորվել է Հաբսբուրգյան եւ Օսմանյան կայսրությունների մայրամուտով եւ ազդադարել նոր դարաշրջանի սկիզբը, ինչպես նաև այն միաժամանակ պատերազմական նոր օջախներ է ստեղծել Բալկաններում եւ Կովկասում: Լամմերտը որպես օրինակ է բերել հայերի ջարդերը՝ նշելով, որ հայերի արտաքսումն ու ոչնչացումը պատերազմ վարելու միջոց դարձրին տեղահանումն ու գանգվածային սպանությունները:

Իր ամփոփման խոսքում Ն. Լամմերտը, անդրադառնալով երկու աշխարհամարտերի հետեւանքների հաղթահարման դժվարին գործընթացին, այն դիտարկել է համատեղության ինտեգրացիոն ծրագրի համատեքստում եւ ընդգծել է, որ եվրոպական օրինակելի փորձը՝ վերջ տալու բռնությունը հիմնական խորհուրդն է մնում անցած հարյուրամյակի ընթացքում տեղի ունեցած երկու աշխարհամարտերի հիշատակը միասնաբար հարգելու համար:

Բունդեսբազի հանդիսավոր նիստին մասնակցել են ԳԴՀ նախագահ Յոախիմ Գաուկը, դաշնային կանցլեր Անգելա Մերկելը, Գերմանիայի կառավարության անդամները, խորհրդարանի պատգամավորներ, ԳԴՀ սահմանադրական դատարանի նախագահը, ինչպես նաև պատվավոր հյուրերի կարգավիճակով՝ Գերմանիայի նախկին նախագահ Ռիխարդ Ֆոն Վայցգեբերը եւ Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի Ժիսկար դ'Էպթենը, իսկ որպես հիմնական բանախոս Փարիզից հրավիրված է եղել հրեական ծագումով դոկ. պրոֆ. Ալֆրեդ Գրոսսերը, ով ծնվել է 1925թ.Գերմանիայում, սակայն 1933թ. նացիոնալ-սոցիալիստների կողմից արտաքսվել էր եւ բնակություն հաստատել Ֆրանսիայում:

Իսրայելցի նախարարը Թուրքիային հիշեցրել է Հայոց ցեղասպանության մասին



Իսրայելի տրանսպորտի նախարար Իսրայել Կացը Թուրքիայի վարչապետ Էրդողանին հիշեցրել է այն մասին, որ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանություն են իրագործել: Կացը Էրդողանին հիշեցրել է Հայոց ցեղասպանության մասին, որի ժամանակ օսման զինվորականների կողմից 1,5 մլն հայ է սպանվել, հաղորդում է «Arutz Sheva»-ն: «1915թ.-ին թուրքերը 1,5 մլն հայ են սպանել: Ու նա դեռ մեզ է մեղադրում է ցեղասպանություն գործելու մեջ՝ նրանց, ովքեր պայքարում են իսլամական շարժման նրա ընկերների հետ»,- գրել է նախարարը «Facebook»-ում: Հիշեցնենք, որ Էրդողանը կտրուկ քննադատության է ենթարկել Իսրայելի գործողությունները Գազայի հատվածում հայտարարելով, որ պաշտոնավարման ընթացքում չի կարող դրականորեն մտածել Իսրայելի մասին: «Իսրայելն այս պահին ահաբեկչություն եւ ցեղասպանություն է իրականացնում: Իսրայելը երկիր է, որը սպառնում է խաղաղությանը ողջ աշխարհում, քանի որ լավ գիտի ինչպես սպանի երեխաներին»,- ասել է նա:

«World Policy Journal». Խեղաթյուրման թուրքական քաղաքականություն. Ինչպես է մոռացվել Հայոց ցեղասպանությունը

NEWS.am-ը զգալի կրճատումներով ներկայացնում է Նյու Յորքից գրող, ակտիվիստ եւ երաժիշտ Ռաֆֆի Վարդանյանի «World Policy Journal» բլոգում հրապարակված հոդվածը:

«Թուրքական ներկա կառավարությունը չի խոսում Հայոց ցեղասպանության մասին, այդ պատմության մասին հազվադեպ են խոսում ամբողջ աշխարհում: Թուրքիայի քաղաքացիներն ու դաշնակիցները Հայոց ցեղասպանության մասին չխոսելն ակտիվորեն խրախուսում են պետության կողմից հովանավորվող եւ երկու ուղղությամբ տարվող պատմության խեղաթյուրման նախագծի օգնությամբ:



Հուլիսի 05, 2014

Թուրքական կառավարության խեղաթյուրման քաղաքականության առաջին ուղղության համար օգտագործվում են օրենքն ու կրթությունը, որպեսզի վերահսկեն քաղաքացիների եւ դաշնակիցների շրջանում երկրի անցյալի եւ ներկայի մասին քննարկումները: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից «YouTube»-ն արգելելը եւ «Twitter»-ն օրենքից դուրս հայտարարելը փաստում են Թուրքիայում խոսքի ազատության խնդրահարույց իրավիճակի մասին: Թուրքական կառավարության խեղաթյուրման քաղաքականության առաջին ուղղությունն առաջարկում է հակաթեզ տեղի ունեցածը ներկայացնելով որպես հարկադրված պատերազմի մեջ ներքաշված խոցելի կայսրությունում անհաջող իրավիճակի արդյունք: Այդ հակաթեզը, որ ֆինանսավորվում է Թուրքիայի կառավարության եւ նրա հարուստ կողմնակիցների կողմից, այնուամենայն էլ, որ Օսմանյան կայսրության հայ հպատակները, ովքեր երկար ժամանակ հայտնի էին որպես «լոյալ միլլեթ» (փոքրամասնություն), ձգտում էին Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայերի հետ համաձայնության գալ՝ Օսմանյան կայսրությունն ապակայունացնելու եւ սեփական երկիրը պահանջելու համար: Ցեղասպանության եզրափակիչ փուլը ժխտումն է, որ այն տեղի է ունեցել, եւ թուրքական կառավարության խեղաթյուրման քաղաքականությունը խաթարում է հաշտեցման գործողությունները, որոնք հարկավոր են պատմության այդ հատվածը խոստովանելու եւ առաջ շարժվելու, ինչպես նաև ընդհանուր ապագայի հնարավորությունները դիտարկելու համար: Կոլումբիական համալսարանի միջազգային հարաբերությունների եւ հասարակայնության հետ կապերի պրոֆեսոր եւ Թուրքական հետազոտությունների ինստիտուտի նախկին ղեկավար, դոկտոր Դեիդ Քեմերոն Քատել-Կրոսերը մատնանշում է Թուրքիայի հյուրընկալության մշակույթի եւ այդ երկրի պատմության չլուծված էջի միջև գոյություն ունեցող ներքին կոնֆլիկտը:

«Ինչպես մարդկանց մեծ մասի,- բացատրում է պրոֆեսորը,- այնպես էլ թուրքերի հետ խնդիրներից մեկն այն է, որ նրանք իսկապես հավատում են, որ իրենք բարի, լավ մարդիկ են: Եվ այդպես էլ կա: Բայց նրանք իսկապես խնդիրներ ունեն հետեւյալ մտքի հետ համակերպվելու առումով. «Ինչպե՞ս կարող էր այդ տեղի ունենալ: Այդ չէր կարող տեղի ունենալ, որովհետեւ տեղի չի ունեցել: Մենք լավ մարդիկ ենք»:
Լռությունը դուրս է գալիս Թուրքիայի սահմաններից: Այսօր ո՛չ իսրայելական, ո՛չ ամերիկյան կառավարությունները չեն խոստովանել, որ հայերի հետ տեղի ունեցածը ցեղասպանությունն է: Թուրքիան իր հզոր տնտեսությունը, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական դիրքը որպես լծակ է օգտագործում սեփական դիրքորոշումն ամրապնդելու համար»:

Ուկրաինայի նախագահին առաջարկելու են ամեն տարի նշել Հայոց ցեղասպանությունը



Կհեւում՝ Ուկրաինայի Գերագույն Ռադայի կոնֆերենց-սրահում կայացել է կլոր սեղան «Լիարժեք երկխոսություն պետության եւ ազգային համայնքների միջեւ» թեմայով, հաղորդում է Analitika.at.ua-ն:

Ուկրաինայի հայերի ազգային կոնգրեսի ներկայացրել է Աշոտ Ավանեսյանը, ով առաջարկել է ժողովրդական պատգամավորներին կլոր սեղանի մասնակիցների անունից ուղերձ ընդունել եւ նախագահ Յանուկովիչից խնդրել ամեն տարի հարգել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, Ուկրաինայում 2011թ. պետական մակարդակով Հայաստանի մաշկույթի օրեր անցկացնել, նաեւ նոր պետական կառույց ստեղծել, որը կկոչվի ազգությունների, կրոնի եւ արտերկրի ուկրաինացիների նախարարություն:

Ուկրաինայի ժողովրդական պատգամավորներն ու կլոր սեղանի անդամները դրական են գնահատել Ավանեսյանի առաջարկը եւ հանձնարարել քարտուղարությանն ուղերձ պատրաստել: Համաձայն 2001թ. մարդահամրի տվյալների, Ուկրաինայում ազգային փոքրամասնությունները կազմում են բնակչության 22,5 տոկոսը:

Թուրքիայում Ցեղասպանության հարց կա, որը դեռ ժխտվում է. Սելահաթին Դեմիրթաշ

Թուրքիայի նախագահի թեկնածուներից Սելահաթին Դեմիրթաշը թուրքական NTV հեռուստաընկերության եթերում խոսել է Թուրքիայի խնդիրներից՝ շեշտելով տարիներով ժխտվող Հայոց ցեղասպանության հարցը: Թուրքիայում «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության (HDP) կողմից Թուրքիայի նախագահի թեկնածու առաջադրված Սելահաթին Դեմիրթաշը NTV-ի եթերում հայտնել է, թե ընտրվելու դեպքում ձեռնամուխ է լինելու նոր Սահմանադրության ստեղծման գործին:



Դեմիրթաշը քննադատել է թուրքական իշխանությունների խտրական վերաբերմունքը Թուրքիայի ոչ թուրք բնակչության հանդեպ՝ հիշեցնելով մի շարք խնդիրներ: «Թուրքիայում կա Հայոց ցեղասպանության հարցը, որը դեռեւս ժխտվում է, կա Դերսիմի, Մարաշի, Սիվասի եւ Գեզիի կոտորածների հարցը, կա քուրդ ժողովրդի դեմ իրականացվող գործողություններ», -ասել է Դեմիրթաշը: Նշենք, որ Սելահաթին Դեմիրթաշը բազմիցս դատապարտել է Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը եւ պնդել, որ Թուրքիան պետք է ճանաչի Ցեղասպանությունը:

Վահրամ Պետրոսյան. Թուրքիան երբեք պատրաստ չի լինի ճանաչել քրդերի պետությունը



Հուլիսի 04, 2014
Թուրքիան երբեք պատրաստ չի լինի ճանաչել քրդերի պետությունը, այդ թվում նաեւ՝ Իրաքի Քրդստանը, հուլիսի 4-ի մամուլի ասուլիսում հայտարարել է պատմաբան եւ քաղաքագետ Վահրամ Պետրոսյանը: Ըստ նրա՝ Թուրքիայում մինչ այժմ ողջ է «սերյան սինդրոմը»: Այլ կերպ ասած, նշել է փորձագետը, «նրանք բացասաբար են վերաբերվում քրդական պետության

կազմավորմանը, քանի որ լավ են հասկանում, որ քրդերի հարցին զուգահեռ ծագելու է նաև հայոց հարցը»: Ըստ մասնագետի՝ Իրաքի Քրդստանի եւ Անկարայի միջև ներկայիս սերտ հարաբերությունները ոչ թե ռազմավարական, այլ իրավիճակային բնույթ են կրում: Դրա մասին է վկայում այն, որ Թուրքիայի ղեկավարությունը միշտ զսպել եւ փորձել է վերահսկել քրդերի ազգային ինքնորոշման եւ Սիրիայի ու Իրաքի տարածքում քրդերի ինքնավարություն ստեղծելու ձգտումը:

Թբիլիսիի հայկական եկեղեցում ծեծել են հայերին

Հուլիսի 19-ի երեկոյան մոտ 50 վրացիներ հարձակվել են Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի Հավլաբարի սուրբ Էջմիածին եկեղեցում պատարագի մասնակիցների վրա և սկսել են ծեծի ենթարկել հավաքված հավատացյալ հայերին:



blognews.am Միջադեպը փորձել է հարթել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, սակայն հարվածներից նրան էլ են բաժին հասցրել: Այնուհետև նրանք մուտք են գործել նաև հարևանությամբ գործող Հայարտուն մշակութային կենտրոն և անվայելուչ արտահայտություններով սպառնալիքներ հնչեցրել: Պարզվում է, միջադեպի պատճառը կենցաղային է. բանն այն է, որ եկեղեցու սպասավոր Տեր Մանուկն իր ավտոմեքենան կանգնեցրել է մեկի բակի մուտքի մոտ ...

Թբիլիսիում հայ եկեղեցականներին սադրել են

Վրաստանի Հայ առաքելական եկեղեցու թեմը հայտարարություն է տարածել այն մասին, որ մոտ 50 մարդ կազմակերպված հարձակում է իրականացրել հայկական եկեղեցու վրա, որի արդյունքում հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչները լուրջ վնասվածքներ են ստացել: Ինչպես հաղորդվում է, եկեղեցականներին սադրել են: Եկեղեցու հարևանությամբ գտնվող տարածքից մեքենայով դուրս գալու անհաջող փորձից հետո ինչ-որ մի կին սկսել է բողոքել, որ եկեղեցականի մեքենան խանգարում է իրեն: Այդ ժամանակ կնոջը մոտեցել են ագրեսիվ տրամադրված երկու տղամարդ և օգնել նրան դուրս բերել մեքենան:

Եկեղեցու բակում գտնվող սարկավագները լսել են, թե ինչպես է տղամարդկանցից մեկն անվայելուչ կերպով արտահայտվում հայերի մասին: Դրանից հետո տղամարդն իջել է մեքենայից, շարունակել է անվայելուչ արտահայտվել, քար է վերցրել և փորձել խփել հայկական թեմի ներկայացուցիչներին: Լսելով ձայները՝ եկեղեցու աշխատակիցները փողոց են դուրս եկել՝ իրավիճակը հարթելու հույսով: Այդ ժամանակ նրանցից մեկը հարված է ստացել մեջքին, և կարճատև կռիվ է սկսվել:



Դեպքից երկու ժամ հետո վերը նշված տղամարդը շուրջ 50 տղամարդկանցից բաղկացած խումբ է հավաքել, որոնց մի մասը զինված է եղել սառը զենքով: Նրանք մոտեցել են եկեղեցուն և սկսել կռվել եկեղեցականների և թեմի աշխատակիցների հետ, ինչպես նաև՝ անվայելուչ կերպով արտահայտվել հայերի մասին: Այդ ժամանակ եկեղեցում կնուների արարողություն է եղել, և մասնակիցները, լսելով ձայները, դուրս են եկել, որից հետո զինված անձինք նրանց վրա ևս հարձակվել են: Սարսափահար եղած կանայք և երեխաները թաքնվել են եկեղեցուն: Հարձակման արդյունքում եկեղեցու ծառայողները և թեմի աշխատակիցները լուրջ վնասվածքներ են ստացել, իսկ եկեղեցականներից մեկի մուտից զինված անձինք գողացել են խաչը: «Կոչ ենք անում Վրաստանի իրավապահ մարմիններին պատշաճ կերպով գնահատել այս գործողությունները և քննել գործը՝ որպես էթնիկ հողի վրա կատարված հանցագործություն: Մեզ համար թանկ է Վրաստանի ներքին կայունությունը և բազմադարյան միջէթնիկական և միջկրոնական հարաբերությունները: Մենք կոչ ենք անում Վրաստանի իշխանություններին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու Վրաստանի հասարակության պառակտումները՝ կրոնական և ազգային հողի վրա:

Սոհեթ

Մեր Անցած Ճամփան

Թ. Ղարախանյան Սիրակցի

Մեկ ճամպուռուկ եւ մեկ հեծանիվով եկա Աղբուլաղ գյուղ եւ հենց նույնպես էլ վերադառնում էի: Հրաժեշտի օրը լրիվ գյուղը իրար լուր տալով մեծ ու փոքր հավաքվեցին դպրոցի դռան ինձ ճանապարհ դնելու:

Աշնան սկիզբն էր եւ գրեթէ բոլորն էլ իրենց կալի գործերը վերջացրել, գյուղատեր խանի բաժին տվել էին եւ ծանր աշխատանքներ չունեին: Բոլորին էլ անձամբ ճանաչում էի: Աղբուլաղ գյուղի ծերունի, գրեթէ գրել կարողալ իմացող, կրոնամոլ ծերուկը, որ առաջին օրը ինձ գյուղին ծանոթացնելիս ասաց “այս գյուղի նախկին բնակիչները կներեք հեռը հեռը ձեզանից ԱՐՄԱՆԻ – պարսկ. հայ- են եղել եւ բոլորն էլ Հայաստան են գնացել” ձեռքս առավ իր ձեռքերի մեջ եվ ասաց՝ “պարսկ...Սարքար Ղարախանյան...մոնե հալալ քոն...մասչեդ քե իրոմ, արսայե փեյամբար ու էմամարո քե իբինոմ բե եադե հագրաթայի միոֆտոմ, վո շարմոմ իբու...մա բո բեբախշ:” Մի խօսքով ինձանից խնդրում էր իրեն ներեմ հայ նախկին գյուղացիներին ոչ-մուսլման եւ հարամ համարելով եւ հատկապես տեսնելով մարգարեների պատկերները, որ անձամբ նվիրել էի մզկիթին: Ծերունին ինձ շատ հուզեց, գլխարկը վերցրեց, ձեռքերս դրեց գլխին եւ կրկնեց իրեն հալալ անեմ եւ գլուխը խոնարհված սպասեց իմ պատասխանին: Ձեռքերս գլխից վերցրի, գլխարկը իր գլխին դրի եւ իրեն ասացի որ “ինքը իմ մեծ պապիս տեղ է եւ լավ մարդ է, լավ սրամիտ ուշիմ թոռներ ունի” եւ խնդրեցի ոտքի կանգնի: Ծերունուն հայտնեցի որ սենյակիս սուրբ գիրք ՂՈՐԱՆԸ թողել եմ իր համար, խնդրեցի որ Ղորան կարդալուց դրացիներին հրավիրի եւ պարսկերեն թարգմանությունը կարդա : Աչքերը լույս եկավ եւ շշմեց եւ դողողալով շարժվեց, որպեսզի ձեռքս համբուրի եւ արգելեցի: Ձեռքը դրեց ճակատիս եւ խոսեց “Զինվոր Ղարախանյան որտեղ գնաս Սարգարեի ձեռքը քո հետ” եւ ամբողջ կրկնեց... “Դաստե Ալի բե համրաթ” եւ կանայք հեռու կանգնած “քի լի լի կանչելով” ինձ ճանապարհ դրին:

Ինձ տանող (pick-up) մեքենայի վարորդը վաղուց չամադանս ու հեծանիվս դասավորել էր եւ, երկար սպասելուց հետո վերջապես մի շունչ քաշեց եւ ճանապարհ ընկավ դեպի մյուս հայաթափ Մամուռան գյուղը, որտեղ օտար գյուղացի հաճախորդներ էին սպասում՝ Օրոջան գյուղաքաղաք գնալու եւ ես այնտեղից պիտի ավտոբուսով Նոր Ջուղա գնայի, որտեղ ինձ սպասում էին Թադեվոս մեծ պապ եւ Եղիսաբեթ մեծ մամս: Նոր Ջուղայում նրանք վերջիններից էին, որ թողեցին իրենց պապական Սիրաք գյուղը: Նշենք որ Սիրաք գյուղը Պարսկաստանի Չարմահալ գավառի վերջին գյուղերից էր, որ հայաթափ եղավ: Մեծ Պապիս ասությանը Սիրաք գյուղին հրաժեշտ տալու պահին ոչ թե միայն պարսիկ գյուղացիներն էին տխրում ու ոմանք էլ արտասովում, այլ, Խանլար մեծ հորեղբայրենց “խալ-խալի” անունով հավատարիմ շունը ավտոբուսի դռան առաջ պարկեղ պոչը տակը դրած, դունչը թաթերի մեջ գետնին դրած ճնգ-վնգալով գետնին քաշ էր գալիս ու Եղիսաբեթ մեծ մամս էլ մեղքը գալով ասել էր “խալ-խալի էլի գու-քանք...մի լա”... եւ նման պատմությունների եւ հիշողություններով հայկական գյուղերը հայաթափ եղան եւ երեք հարյուր տարվա զարկող ու շնչով հայաբնակ գաղութի սիրտը, դադարեց բաբախելուց ...



Թամար Փանոսյան
Հայերեն-պարսկերեն առաճաճի
 زبانزدهای ارمنی
 تالیف تامار پانوسیان

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

Այլուրը մենք մաղեցինք, փախլավան ուրիշները կերան:

Ախպերն ախպոր համար աղբյուր, ծարավ սրտին սառը ջուր:

Ահը շատ է, քան թե մահը:

Աղվեսի վկան իր պոչն է:

Աղքատին ո՞վ է տվել արքայություն:

Ամառը որ պառկես հովեր, ձմեռը կսատկեն կովեր:

Ամեն անգամ գետը գերան չի բերի:

Ամեն բան իր տեղը կգա, քոսայի մորուքը չի գա:

Ամեն բարեւ տվող բարեկամ չէ:

Ամեն մարդ կրակն իր ձվածեղի տակն է քաշում:

Ամեն մարդու շապիկը իր մարմնին մոտ է: 15

Ամեն շուն իր դռանն է հաչում:

Ամեն փորձանք մի խրատ է, ոչ փորձանքը կվերջանա, ոչ խրատը:

Այծին պոզեր չեղան, ասաց՝ այս տարվա ուլն եմ:

Այծն այծի համար լավ է, քան մի հոտ ոչխարը:


ارمنی نیز دارای تلفات جانی می باشند و وزارت دفاع قره باغ با خانواده سربازان قربانی شده ابراز همدردی می کند. وزارت دفاع قره باغ از تلفات جانی طرفین ابراز تاسف کرده و اعلام می کند که سران نظامی و سیاسی آذربایجان مسئول این تلفات جانی می باشند.

وزارت دفاع قره باغ یاد آوری می کند که چنین اقدامات نیروهای مسلح آذربایجان با روند مذاکرات حل بحران قره باغ از طریق صلح در چهارچوب گروه مینسک سازمان امنیت و همکاری اروپا تضاد دارد و از سران آذربایجانی درخواست خودداری از افزایش تشنج در خط تماس می کند.

برای اولین بار در منطقه:

در ارمنستان شتاب دهنده نوترونی "آریال" به بهره برداری

میرسد



در مصاحبه مطبوعاتی مدیر موسسه علمی کندل "واسیلی تساکانوف" اعلام کرد ما گام مهمی برداشتیم و این شتاب دهنده در منطقه منحصر به فرد میباشد و ارمنستان موفق به ساخت آن شده است چنین دستگاهی تنها در کشورهای پیشرفته وجود دارد.

وی همچنین اعلام کرد که مراکز تحقیقاتی آلمان و سویس تجهیزات فوق پیشرفته ای در اختیار ما قرار داده اند که به وسیله آنها ما موفق به ساخت این دستگاه مدرن شدیم. و به این ترتیب این شتاب دهنده میتواند به بررسی خوشه های زیر اتمی به پردازد که در واوم فیزیک یکی از مباحث مهم به شمار میرود. تمام کادر علمی این موسسه را دانشمندان جوان تشکیل میدهند و از ماه اکتبر این شتاب دهنده دو آزمایش اولیه خود را انجام خواهد داد تا کنون این موسسه ۱۵ درخواست تحقیقاتی دریافت کرده است.

قیمت تقریبی این دستگاه معادل ۲۰ میلیون یورو ۲۶ میلیون دلار میباشد که دولت ارمنستان حدود ۹۰۰ هزار دلار آن را تقبل کرده و مابقی از طریق کمکهای علمی تامین شده است

جشن وارد اوار - آب پاشان

این جشن از قدیمی ترین جشن های ارمنیان محسوب می شود که در میان ایرانیان به عید آب پاشی ارمنیان شهرت دارد. ارمنیان در این روز به یکدیگر آب می پاشیدند، کیوتر پرانی می کردند و مسابقات ورزشی ترتیب می دادند.

بیشتر محققانی که در زمینه اعیاد ارمنیان پیش از مسیحیت تحقیق می کنند، این جشن را مربوط به الهه آستگیگ و الهه آناهید می دانند. به موجب افسانه های ارمنی، آستگیگ، الهه زیبایی، باروری و حاصل خیزی بود و برگزاری این جشن در فصل تابستان به منظور طلب باران و برکت بوده است. جشن آب پاشی از جشن های خاص اقوام آریایی است و ارتباطی با دین خاصی ندارد ولی ارمنیان از سده چهارم میلادی پیرایه های مذهبی برای آن فراهم کردند. اکنون جشن وارد اوار به عنوان یکی از اعیاد مسیحیت، نود و هشت روز پس از عید پاک، بین بیست و هشتم ماه ژوئن تا اول ماه آگوست برگزار می شود. این جشن در ایران از

سخنگوی وزارت خارجه:

مناقشه ارمنستان و آذربایجان راه حل نظامی ندارد/ دو

کشور برای حصول توافق مذاکره کنند

تهران- ایرنا- سخنگوی وزارت امور خارجه جمهوری اسلامی ایران با بیان اینکه درگیری و مناقشه بین جمهوری ارمنستان و جمهوری آذربایجان راه حل نظامی ندارد، انجام گفت و گو و مذاکره برای حصول توافق بین دو کشور همسایه را مورد تاکید قرار داد.



به گزارش ایرنا از اداره کل دیپلماسی رسانه ای وزارت امور خارجه، مرضیه افخم با اظهار تاسف از کشته شدن چندین نفر در درگیری نظامی اخیر بین جمهوری ارمنستان و جمهوری آذربایجان، از بلاگرفتن درگیری و خشونت ابراز نگرانی و طرفین را به خویشتنداری دعوت کرد.

بیانیه ای وزارت دفاع جمهوری قره باغ در مورد تشدید تنش

در منطقه



www.nkrmil.am

در بخشی از این بیانیه آمده است: در تاریخ ۳ ماه آگوست وضعیت متشنج در خط تماس نیروهای ارمنی و آذربایجانی ادامه می یابد. نیروهای آذربایجانی به کوششهای خود در جهت انجام اقدامات تحریک آمیز در خط تماس و تیراندازی به مواضع نیروهای ارمنی و روسا های مرزی با سلاح های مختلف ادامه می دهد. بر اثر پاسخ مناسب نیروهای ارمنی نیروهای آذربایجانی مجبور به عقب نشینی شده و در حال حاضر امنیت مرزها تحت کنترل و نظارت ارتش تدافعی جمهوری قره باغ قرار دارد.

وزارت دفاع جمهوری قره باغ بار دیگر اعلام می کند که افزایش تشنج در خط تماس نتیجه سیاست غیر سازنده سران نظامی و سیاسی آذربایجان که باعث تلفات متعدد جانی شد می باشد. متأسفانه در نتیجه چنین اقدامات تحریک آمیز نیروهای

زمان مادها تا پایان دوره صفوی برگزار می‌شد.

در حال برداشت محصول گندم مورد هدف قرار گرفته و خوشبختانه صدمات مالی و جانی در پی نداشته و فقط باعث متوقف شدن فعالیت های کشاورزی شده است."



وی همچنین در ادامه سخنان خود افزود تیر اندازی ها به سوی روستا هم ادامه دارد ولی این زیاد باعث نگرانی نیست نگرانی ما بیشتر از بابت تیر اندازی ها به سوی زمینهای کشاورزی میباشد چون الان فصل جمع آوری محصول گندم و جو میباشد و این آتش بارها مزاحم فعالیت روستایان میشود .

وی همچنین افزود مسولین روستاهای مرزی استان تاوش با مراجعه به سازمان صلیب سرخ از آنها در خواست دخالت آنها جهت حفظ امنیت روستایان شده اند . لازم به ذکر است در چند ماهه اخیر فعالیت نیروهای مسلح آذربایجان در مناطق مرزی شدت گرفته است و بارها ضمن نقض آتش بس فیما بین باعث ایجاد خساراتی در مناطق مرزی شده اند

در تازه ترین این حوادث نیروهای ویژه آذربایجان ضمن نفوذ به مناطق کارواچار با کشتن یک شهروند غیر نظامی ارمنی و زخمی کردن یک نفر دیگر قصد خروج از منطقه را داشتند که در درگیرس با نیروهای مسلح ارمنستان یک نفر از آنها کشته و درو نفر دیگر بازداشت شدند.

در ماه مه حجم پول در گردش ارمنستان ۱,۵ درصد رشد داشته است



در ارمنستان در پایان ماه می ۲۰۱۴ حجم پول در گردش در ارمنستان با رشدی معادل ۱,۵ درصد به نسبت ماه آوریل به ۱۵۷۴میلیارد درام حدود ۴ میلیارد دلار رسید.

در ارمنستان در پایان ماه می ۲۰۱۴ حجم پول در گردش در ارمنستان با رشدی معادل ۱,۵ درصد به نسبت ماه آوریل به ۱۵۷۴میلیارد درام حدود ۴ میلیارد دلار رسید.

به گزارش سازمان آمار ارمنستان بر پایه اطلاعات منتشره بانک مرکزی ارمنستان میزان پول در گردش خارج از سیستم بانکی معادل ۳۴۲ میلیارد درام بود است و میزان سپرده های بانکی قابل پرداخت ۱۹۱میلیارد درام میباشد.

میزان سپرده های مدت دار در مدت زمان فوق معادل ۲۸۸ میلیارد درام بوده است. در همین مدت میزان سپرده های ارزی در بانکهای ارمنستان معادل ۷۵۳میلیارد درام میباشد



بیشتر محققانی که در زمینه اعیاد ارمنیان پیش از مسیحیت تحقیق می‌کنند، این جشن را مربوط به الهه آستیگ و الهه آناهید می‌دانند. به موجب افسانه‌های ارمنی، آستیگ، الهه زیبایی، باروری و حاصل خیزی بود و برگزاری این جشن در فصل تابستان به منظور طلب باران و برکت بوده است. جشن آب پاشی از جشن‌های خاص اقوام آریایی است و ارتباطی با دین خاصی ندارد ولی ارمنیان از سده چهارم میلادی پیرایه‌هایی مذهبی برای آن فراهم کردند. اکنون جشن واردوار به عنوان یکی از اعیاد مسیحیت، نود و هشت روز پس از عید پاک، بین بیست و هشتم ماه ژوئن تا اول ماه آگوست (۴ مرداد در گاهشماری ایرانی) برگزار می‌شود. این جشن در ایران از زمان مادها تا پایان دوره صفوی برگزار می‌شد.

درباره ی چرایی نامگذاری این عید، گفتارهای متفاوتی وجود دارد برخی از محققان «وارد» را به معنی «آب» و «اوار» را به معنای «راه آب» میدانند و این جشن را به ایزد بانوی آنها «آناهیتا» نسبت میدهند و برخی دیگر واژه ی «وارد» را به معنی گل می‌دانند و این جشن را از آن «آستفیک» ایزدبانوی زیبایی و دلاوری میدانند. بر پایه ی نوشته‌های مورخان ارمنی، در ارمنستان قدیم، جشن «واردوار» برای بزرگداشت ایزدبانوی زیبایی با شکوه فراوان برپا می‌شده، همه ی مردم در این جشن شرکت می‌کردند و الهه را با گل‌های سرخ می‌آراستند. می‌گویند گل سرخ، پیش از این به رنگ سفید بوده است تا هنگامی که الهه، با پای برهنه به میان مردم آمد و خارها پاهای او را زخمی کردند و از خون وی آن گل های سفید رنگین شدند، از آن پس گل سرخ امروزی پدید آمد. ارمنیان امروز، از عید پاک ۱۰۰ روز را شمارش کرده و در نزدیک‌ترین یکشنبه، مراسم «واردوار» را به جای می‌آورند.

نقض مجدد آتش بس توسط جمهوری آذربایجان در مناطق مرزی ارمنستان


نیروهای ازتش آذربایجان ضمن نقض آتش بس زمینهای کشاورزی استان تاوش ارمنستان را گلوله باران کردند .

نیروهای ازتش آذربایجان ضمن نقض آتش بس زمینهای کشاورزی استان تاوش ارمنستان را گلوله باران کردند .

به گزارش پان آرمینیا. دیروز و امروز زمینهای زراعی مناطق مرزی استان تاوش ارمنستان از مواضع نیروهای آذربایجان مورد گلوله تاران قرار گرفته و باعث ایجاد اختلال در انجام امور زراعی توسط ساکنین منطقه شده است .

به گزارش این خبرگزاری به نقل از کدخدای روستای موسس (موسی) "در روز گذشته به سمت ماشین آلات کشاورزی آتش گشوده شده در این حادثه کمباین

ويليام سارويان نويسنده معروف ارمني اهل آمريكا



دلبستگی فراوان داشت و نثر شاعرانه اش در زندگینامه نویسی از ویژگی های بارزش بود. ۲۵ نمایشنامه، بیش از ۲۵ رمان و دهها داستان کوتاه در کارنامه نویسنده اش جای گرفته است که رمان کمده انسانی یکی از این میان است که دکتر سیمین دانشور به فارسی ترجمه کرده است. در دنیای نمایشنامه نویسی سارویان را بیش از هر چیز با نمایشنامه « دوران زندگی تو » می شناسند. همین نمایشنامه بود که جایزه پولیتزر را در ۱۹۳۹ از آن خود کرد و پس از آن جایزه منتقدان نمایش نیویورک از آن سارویان شد. و در ۱۹۴۸ از روی این نمایشنامه فیلمی سینمایی با بازی جیمز کاگنی ساختند.

رییس جمهوری قره باغ معاون رییس پارلمان اروپا را به حضور پذیرفت



باگو ساهاکیان رییس جمهوری قره باغ یاتسک پروتاسیویچ معاون رییس پارلمان اروپا را به حضور پذیرفته است. طی این دیدار مسائل مربوط به مناسبات قره باغ - اروپا، روند حل بحران قره باغ و تحولات منطقه ای مورد بحث و بررسی قرار گرفته اند. این مطلب را سرویس مطبوعاتی ریاست جمهوری قره باغ اعلام کرده اند.

" باگو ساهاکیان " رییس جمهوری قره باغ تاکید کرده است که دولت استیپاناکرت برقراری و تقویت روابط با پارلمان اروپا و دیگر سازمان های اروپا را مهم ارزیابی می کند.

در سال ۲۰۱۴ ارمنستان ۶ هزار تن گوشت گوسفند به ایران صادر می کند



وزارت کشاورزی ارمنستان اعلام کرد که این کشور در سال ۲۰۱۴ حدود ۶ هزار تن گوشت گوسفند برابر با ۱۵۰ تا ۱۵۵ هزار راس گوسفند به ایران صادر خواهد کرد.

وزارت کشاورزی ارمنستان اعلام کرد که این کشور در سال ۲۰۱۴ حدود ۶ هزار

ويليام سارويان در آمريكا به دنيا آمد و در آمريكا بزرگ شد و در همان جا نيز چشم از جهان فرو بست. آنچه سارويان نوشت به زبان انگليسي بود، اما تبار ارمني او در تاروپود آثارش تنيده شد. بسياری از نويسندگان نامدار جهان را می شناسيم که وقتی در سرزميني جز زادگاهشان زندگی کردند، يا حتی آنانی که به اجبار تن به تبعيد دادند، اگر نگوييم که ريشه های خود را به دست فراموشي سپردند، اما می توانيم به يقين مدعی شويم که رویکردی جهان وطنی پيدا کردند. شايد امروز کمتر کسی باشد که وقتی آثار جوزف کنراد را ميخواند زادگاه اصلی او، يعنی لهستان را به ياد بياورد و يا با خواندن آثار آرتور کوستلر چندان نشانی از سرزمين مادری اش، مجارستان بيايد. اما ويليام سارويان هرگز سرزمين آبا و اجدادی خود را از ياد نبرد. او در فرزنوی کاليفرنيا به دنيا آمد، به سال، در خانواده ای مهاجر که از امپراتوری عثمانی، ترکيه کنونی، به آمريكا کوچ کرده بود. ويليام سه ساله بود که پدرش از دنيا رفت و او و خواهر و برادرش را به يتيمخانه ای در اوکلند کاليفرنيا فرستادند و بعدها تجربه زندگی در يتيمخانه به نوشته هایش راه يافت. پنج سال بعد اعضای خانواده به همت مادر ويليام که توانست کاری برای خود دست و پا کند دوباره دور هم جمع شدند. ويليام کار و تحصیل را با هم توأمان کرد تا بتواند از باری که بر دوش مادرش بود اندکی بکاهد. اما وقتی مادرش نوشته های پدر ويليام را به او نشان داد، او نيز مصمم شد تا نويسنده شود. نخستين داستانهای ويليام سارويان در دهه منتشر شد و مضمون اين داستانها به تجربه های دوران کودکی او در میان باغداران کاليفرنيا برمی گشت و يا بيريشگی مهاجران را در داستانهایش نشان می داد. مجموعه داستان کوتاه او با عنوان « نام من آرام است » که در منتشر شد و به ماجراهای پسری جوان و خانواده مهاجرش می پرداخت به مجموعه ای پرفروش در جهان بدل شد و ترجمه آن به بسياری از زبان های دنيا اين داستان ها را دردسترس همگان قرار داد. زندگی شخصی سارويان در گير فراز و نشيب های فراوان بود. به سال با کارول مارکوس يا کارل گريس پيوند زناشویی بست که بازيگر سينما بود و حاصل اين ازدواج یک پسر و یک دختر شد به نامهای آرام و لوسی. اما عادات بد ويليام زندگی زناشویی آن دو را دستخوش آشفتنگی ساخت که در به جدایی او از همسرش انجاميد و در ۱۹۵۱ باز به زندگی با هم روی آوردند تا سرانجام جدایی کارول از سارويان در ۱۹۵۲ و ازدواجش با یکی ديگر از بازيگران سينما برای هميشه به اين وصلت پايان داد. سارويان در سن ۷۲ سالگی بر اثر ابتلا به سرطان پروستات درگذشت. نیمی از خاکسترهای او در کاليفرنياست و نیمی ديگر در ارمنستان و در نزديکی مزار سرگئی پارچانف، کارگردان نامدار سينمای ارمنستان. سارويان نويسنده ای پرکار بود. او به نوشتن خاطرات و زندگی نامه

مشکلات را حل کنند. جانانه ادامه داد: خطبه هایی که در این مراسم خوانده شد شامل حمایت و پشتیبانی مالی و معنوی از مردم غزه و فلسطین و سوریه در تمام سطوح بوده است. رییس شورای خلیفه گری ارامنه آذربایجان گفت: رعایت کامل حقوق بشر و عدم نقض آن در ایران نیز از بخشهای دیگر خطبه های این مراسم مذهبی بود. وی اظهار کرد: این مراسم با خواندن دعای آمرزش و سوگواری برای شهدای غزه و فلسطین و بخصوص کودکان بی گناه و بی دفاع کشته شده در این نبرد نابرابر به پایان رسید. امسال در مراسم عشای ربانی یا همان باراداک در قره کلیسا که از نهم مرداد ماه شروع شده بود بیش از هفت هزار نفر گردشگر از کشورهای مختلف جهان حضور داشتند که در اطراف مجموعه جهانی قره کلیسا اسکان داده شده بودند. قره کلیسا یا کلیسای تاتائوس یکی از زیباترین آثار تاریخی واقع در شمال آذربایجان غربی است که نظر هر گردشگری را با معماری بی نظیرش به خود جلب می کند.



این کلیسا قدیمی ترین کلیسای عالم مسیحیت به شمار می رود و قدمت آن به قرن های هفتم و دوازدهم میلادی بر می رسد .
قره کلیسا که در بین ارامنه جهان به تاده مقدس معروف است در ۲۰ کیلومتری شمال شرق شهرستان چالدران بر روی مزار طاطائوس حواری حضرت مسیح (ع) احداث شده است .

این بنای تاریخی - مذهبی به سبب برخورداری از معماری بی نظیرش در تیر سال ۸۷ به عنوان نهمین اثر ثبت شده کشور در سی و دومین نشست میراث جهانی یونسکو در کبک کانادا در فهرست آثار تاریخی جهان قرار گرفت و ثبت جهانی شد . قره کلیسا (کلیسای تاتائوس) در هفت کیلومتری جاده چالدران - قره ضیاءالدین و در دامنه کوه و روی تپه 'ماهور' قرار دارد . اهمیت بنای تاریخی قره کلیسا علاوه بر قدمتش و معماری کم نظیرش، به علت شهادت تاتائوس مقدس یکی از حواریون حضرت مسیح (ع) است که به دستور پادشاه ارمنستان به همراه پیروانی که به دین مسیحیت گرویده بودند در این منطقه به شهادت می رسد.

بعد از شهادت حواری حضرت مسیح (ع)، او را در محل کنونی کلیسا به خاک می سپارند . بعدها روی قبر او نمازخانه کوچکی می سازند و در قرن هفتم میلادی این نمازخانه به کلیسای بزرگی تبدیل می شود. این کلیسا در بین ارامنه مقدس است و بسیاری از آنان فرزندان خود را برای غسل تعمید به این کلیسا می برند، در آتجا جشن می گیرند، گوسفند قربانی می کنند و از خدا و حضرت مسیح (ع) خواسته های خود را طلب می کنند . در تیر ماه یا مرداد ماه هر سال، هموطنان ارمنی از سراسر ایران به این کلیسا می آیند و ضمن زیارت مقبره 'تاتائوس مقدس' آیینی موسوم به 'باداراک' (عشای ربانی) و نیایش و قربانی به جای می آورند. به سبب شهرت جهانی این کلیسا، مسیحیان دیگر کشورهای جهان از جمله ارمنستان، سوریه، لبنان، هلند، فرانسه، اتریش، آلمان، کانادا و دیگر کشورها نیز در این مراسم شرکت می کنند .

تن گوشت گوسفند برابر با ۱۵۰ تا ۱۵۵ راس گوسفند به ایران صادر خواهد کرد.

خبرگزاری فارس: ارمنستان ۶ هزار تن گوشت گوسفند به ایران صادر می کند به گزارش گروه اقتصاد بین الملل فارس به نقل از آژانس خبری آرکا، آشوت هوانیسیان رئیس اداره دامپزشکی وزارت کشاورزی ارمنستان گفت: این کشور قصد دارد در سال جاری میلادی حدود ۶ هزار تن گوشت گوسفند (برابر با ۱۵۰ تا ۱۵۵ راس گوسفند) به ایران صادر کند.

وی افزود: شرایط ذبح حلال در کشتارگاه های دامها (صادراتی به ایران) رعایت خواهد شد.

هوانیسیان توضیح داد: ایران واردکننده اصلی گوسفند از ارمنستان است. پیش از این طرف ایرانی دام زنده خریداری می کرد اما اکنون این کشور به ویژه به دلیل ملاحظات بهداشتی ترجیح می دهد تا گوشت از این کشور وارد کند.

بر اساس اعلام این وزارتخانه، مجموع صادرات گوسفند ارمنستان در سال ۲۰۱۳ حدود ۱۰۰ هزار راس بوده است که بیشتر این تعداد به ایران و باقی به عراق صادر شده است.

مسکو در گیری نظامی میان ارمنستان و جمهوری آذربایجان را محکوم کرد

تهران- ایرنا- 'ماریا زاخاروا' معاون بخش اطلاعات و مطبوعات وزارت امور خارجه روسیه تنش میان باکو و ایروان که موجب کشته شدن شماری از طرفین شده است را محکوم و اعلام کرد که این تنش ها موجب نقض آتش بس میان ارمنستان و جمهوری آذربایجان خواهد شد.

به گزارش بخش فرانسوی زبان خبرگزاری ریانووستی، وزارت خارجه روسیه ضمن ابراز تسلیت به خانواده قربانیان درگیری دو روز گذشته خاطر نشان ساخت که تحولات روزهای اخیر نقض جدی و آشکار آتش بس میان دو کشور و خدشه دار کردن حل سیاسی مناقشه میان طرفین است. این مقام وزارت خارجه روسیه تأکید کرد که این کشور هرگونه تنش میان باکو و ایروان را غیر قابل قبول می داند و از طرفین درگیری خواستار خویشتنداری و استفاده نکردن از قوه قهریه است.

دعای مسیحیان برای مردم غزه و فلسطین

ارومیه - ایرنا - رییس شورای خلیفه گری ارامنه آذربایجان گفت: مسیحیان حاضر در آیین سالانه مذهبی (عشای ربانی) قره کلیسای چالدران امروز برای مسلمانان مظلوم و بی دفاع غزه و فلسطین دعا کردند.

"روییگ جانانه" در گفت و گوی اختصاصی با خبرنگار ایرنا با ارائه گزارشی از مراسم باراداک (عشای ربانی) مسیحیان در قره کلیسای چالدران افزود: بخش اصلی این آیین مذهبی با حضور اسقف اعظم تهران، اسقف آذربایجان، روحانیان مسیحی اصفهان، تبریز و ارومیه، نماینده مردم در مجلس شورای اسلامی و فرماندار چالدران پیش از ظهر امروز در بنای تاریخی قره کلیسای چالدران برگزار شد.

وی اظهار کرد: مسیحیان حاضر در این مراسم بعد از قرائت بخشهایی از انجیل برای برقراری صلح در جهان و بویژه در خاورمیانه و در سرزمین فلسطین دعا کردند.

وی گفت: برنامه دعا و نیایش و برگزاری خطبه های آخر از جمله برنامه هایی بود که در این مکان تاریخی و مذهبی به اجرا در آمد . وی اظهار کرد: در این مراسم اسقف گریگور چیفتچیان خلیفه ارامنه آذربایجان نیز در بخشی از سخنان خود از اتفاقاتی که امروز در فلسطین رخ داده اظهار تاسف و تائر کردند و از مردم منطقه خواستند هشیار بوده و با همفکری و گفت و گوی بین ادیان مسایل و

تشدید نقض آتش بس توسط ارتش آذربایجان



روستاهای مرزی ارمنستان گلوله باران شدند

در پی عملیات ایزای ناموفق نیروهای ویژه ارتش جمهوری آذربایجان در مناطق شمالی خطوط تماس نیروهای دفاعی جمهوری قره باغ و نیروهای آذربایجان در دو روز گذشته، نیروهای آذربایجان با سلاح های نیمه سنگین اقدام به گلوله باران مناطق مسکونی در نزدیک خطوط مرزی ارمنستان و آذربایجان به خصوص روستای "بارکاماو" کردند.

در پی ادعا رسانه های جمعی آذربایجان در مورد نقض آتش بس توسط ارتش ارمنستان سایت رسمی وزارت دفاع جمهوری قره باغ تصاویری از سلاح های به جا مانده از نیروهای آذربایجان در مناطق تحت کنترل نیروهای دفاعی را منتشر کرد است.

در همین حال رسانه های آذربایجان اعلام کردند هواپیماهای جنگی آذربایجان در مناطق مرزی پروازهای انجام داده اند.

ماهنامه ارمنی - فارسی زبان

لوئیس

صاحب امتیاز، مدیر مسئول و سردبیر

ادیک باغداساریان

نشانی نشریه: تهران صندوق پستی ۹۴۸۸-۱۵۸۷۵

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

چاپ احسان - تهران خیابان انقلاب شماره ۱۱۴۸ کدپستی ۱۳۱۵۷-۶۳۵۶۱ تلفن ۶۶۴۹۵۷۶۱

۲۸ صفحه تک شماره ۵۰۰ تومان

اشتراک مجله: تک شماره ۵۰۰ تومان. ایران یک سال ۶۰۰۰ تومان خارج ۵۰ دلار

شماره حساب ۱۴۰۶۸۶۴۹۲ بانک تجارت شعبه مجیدیه سه راه ارامنه

♦ مقالات و دیدگاه های مندرج در ماهنامه «لوئیس» لزوماً بیانگر موضع مدیر مسئول و هیئت سردبیری نیست.

♦ مقالات، عکس ها و مطالب رسیده باز گردانده نمی شود.

♦ نشریه در حکم و اصلاح مقاله ها مجاز است.

♦ استفاده از مطالب «ماهنامه لوئیس» با ذکر ماخذ آزاد است.

در گذرگاه تاریخ

منبع: مجموعه اسناد تاریخی نژادکشی ارمنیان در امپراتوری عثمانی - ایروان ۱۹۹۱

گردآوری و ویرایش: پرفسور آکادمیسین م.گ. نرسیسیان

ترجمه: ادیک باغداساریان (ا.گرماتیک)

گزارش مقام اداره روابط دیپلماتیک نایب السلطنه

قفقاز به وزارت امور خارجه روسیه

تلگراف شماره ۴۳۱

۱۰ آوریل ۱۹۱۵

شورای ملی ارمنیان دیادین امروز تلگراف زیر را دریافت کرده است. بامدادان ۲۳ مرد که به دیادین آمده اند و از مناطق آرچش و سولومون فرار کرده اند چنین تعریف می کنند که ارمنیان آن مناطق به دستور حکومت ترکیه به دست نیروهای انتظامی ترک کشته شده اند. ترکها در وان با ارمنیان به زد و خورد می پردازند. لازم است برای پذیرش پناهجویان ولایت وان تدارکات مورد نیاز پیشبینی شود.

استولیا

نامه وزیر خارجه روسیه به ایزولسکی و بنکندورف سفیران این کشور

پاریس و لندن

تلگراف شماره ۱۸۷۶

تاریخ ۱۲ آوریل ۱۹۱۵

عطف به تلگراف ما به شماره ۱۸۱۸: اطلاعات جدیدی در مورد اوضاع وخیم کشتار ارمنیان توسط ترکها و کردها در بخش آسیایی ترکیه به وزارتخانه رسیده است. لطفاً با به دولتهای فرانسه (و انگلیس) پیشنهاد کنید اقدامات مشترکی صورت گیرد و بیانیه ای خطاب به باب عالی (عثمانی) ارسال گردد و در آن مسئولیت کشتار ارمنیان به عهده همه اعضای دولت ترکیه و نیز کلیه مقامات نظامی و غیر نظامی دخیل نهاده شود.

در این بیانیه می توان به فشارها و اقداماتی اشاره کرد که از سوی اروپا در رابطه با کشتارهای ۱۸۶۰ در سوریه اعمال گردید. در صورت توافق دولتهای فرانسه (و انگلیس)، لطفاً در مورد متن بیانیه اقدام کنید و ضروری است این بیانیه در اسرع وقت از طرف سه کشور در یک روز صادر شود.

وزیر خارجه، سازونوف

مقام اداره روابط دیپلماتیک نایب السلطنه قفقاز به وزیر امور

خارجه روسیه

تلگراف ۴۹۰

۲۳ آوریل ۱۹۱۵

برزوسکی به خاتیسوف تلگراف زده است که سه ارمنی به ستاد آذربایجان آورده شدند که آرام آنها را از وان فرستاده تا خبر بیاورند که از روز ۱۵ آوریل همه ارمنیان در بخش ارمنی شهر پناه گرفته اند. جودت پاشا شهر را بمباران می کند و ۱۷۰۰ گلوله شلیک شده است. ارمنیان ۱۰۰ روستای همجوار کشته شده اند، زنان را به کوه ها منتقل کرده اند نیروی مقاومت ارمنیان محاصره شده رو به کاهش است.

استولیا

Լույս են տեսել

Էդիկ Բաղդասարյանի նոր գրքերը

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 10 ՀԱՏՈՐՈՎ
ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 7 հատորով

دوستی دیرینه ایرانیان و ارمنیان – (Պարսկերեն)
ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը`

تاریخ ارمنیان ایران – جلد اول و دوم (պարսկերեն) 2 ՀԱՏՈՐՈՎ

Աղվանք, Աղբբեջան, Ոճրագործություն եւ Ծավալապաշտություն
(Պարսկերեն) اران، آذربایجان، جنایت و توسعه طلبی

تاریخ ادبیات ارمنی در ۳ جلد (Պարսկերեն) 3 հատորով

Հայկական հարցը, հնագույն շրջանից մինչև մեր օրերը, 2 հատորով (Հայերեն)

شاهنامه و منابع ارمنی (Պարսկերեն) Շահնամեն եւ հայկական աղբյուրները

Կոմիտասը եւ Հայ դասական երաժշտության ձևավորումը (Պարսկերեն)

کومیتاس و شکل گیری موسیقی کلاسیک ارمنی

گیکور، اثر هوانس تومانیان برگردان انگلیسی، تورونتو، ۲۰۱۴

Հողվածների ժողովածու, Հատեր Ա,Բ- Պարսկերեն

گزیده مقاله های فارسی ادیک باغدادساریان، جلد ۱ و ۲، تورونتو، ۲۰۱۴

Հողվածների ժողովածու, Հատեր Գ, Հայերեն

گزیده مقاله های ارمنی ادیک باغدادساریان، جلد سوم، تورونتو، ۲۰۱۴

Հայ գրականության ընտրանի (Անգլերեն եւ պարսկերեն) Տորոնտո, 2014.

گزیده نثر و نظم ادبیات ارمنی، برگردان فارسی و انگلیسی – ادیک باغدادساریان، تورونتو ۲۰۱۴

Ակնարկ Պարսկերենի Ուղղագրության, (Պարսկերեն) Տորոնտո, 2014.

نگاهی بر شیوه نگارش فارسی – ادیک باغدادساریان، تورونتو ۲۰۱۴

Թարգմանության մասին (Պարսկերեն), Տոտոնտո, 2014

نگاهی بر فن ترجمه، فارسی – ادیک باغدادساریان، تورونتو ۲۰۱۴

Հայոց ցեղասպանության Պատմություն, (Պարսկերեն), Տորոնտո, 2014

تاریخ نژادکشی ارمنیان، فارسی – ادیک باغدادساریان، تورونتو ۲۰۱۴

تاریخ نژادکشی ارمنیان



دکتر ادیک باغدادساریان
(3-گրմատիկ)

Էդիկ Բաղդասարյան
(Էդ. Գեղամանիկ)

Հայոց Ցեղասպանության Պատմություն
(Պարսկերեն)



History of the Armenian Genocide

by:
Edic Baghdasarian, Ph.D.
(Ed. Garmatik)

ISBN : 978-1-927860-25-0

WWW.Edic-Baghdasarian.com

Պատվիրելու համար դիմել edbagh@yahoo.com կամ 1-818-627-8643